

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐԻ ԱՌՁԵՎ

Պետական մեքենայի և տնտեսության բարեփոխման հիմնախնդիրները\*

Մուտք

Հայաստանի երրորդ Հանրապետությունը թևակոխել է իր պատմության երրորդ տասնամյակը, ուստի այս օրերին հանդես են գալիս մեծ թվով հեղինակներ, որոնց հրապարակումներում փորձ է արվում ամփոփել մեր անցած դժվարին ուղին: Արդյո՞ք վերջին 20 տարիների ընթացքում գործել ենք մեր հնարավորությունների սահմաններում, որքանով էր մեր հասարակությունը պատրաստ դիմագրավելու մինչև այժմ առկա և նոր միայն ուրվագծվող մարտահրավերներին, կարո՞ղ ենք արտաքին աշխարհում լինել մրցունակ, արդյո՞ք ՀՀ պետական մեքենան հիմնավոր և արդյունավետ է կառուցված, նպատակաուղղված են պետության միջոցներն ու ջանքերը ժողովրդի կենսապայմանների բարելավմանը, ի՞նչ սկզբունքային բացթողումներ և վրիպումներ ենք թույլ տվել, որոնք հնարավոր է շտկել: Վերջապես՝ որո՞նք են մեր երկրի զարգացման մեջ ճեղքում ապահովելու գլխավոր ուղիները:

Երբ իր 20-ամյակը բոլորած Հայոց պետականությունը կանգնած է ճակատագրական նշանակություն ունեցող նման հիմնահարցերի առջև, Հայաստանի իշխանություններն անցած քսան տարիների ընթացքում չլուծված խնդիրների ծանր բեռը փորձում են ներկայացնել որպես մեր պետության երիտասարդ լինելու, երկրի սահմանափակ ռեսուրսների, Ղարաբաղյան հիմնահարցի առկայության, անբարենպաստ աշխարհաքաղաքական դիրքի, ասիացուն բնորոշ օրի-

\* Հայաստանի Հանրապետության անցած 20-ամյա ուղին ամփոփող ներկա ուսումնասիրության հեղինակը երկար տարիներ պատասխանատու պաշտոններ է զբաղեցրել ինչպես խորհրդային, այնպես էլ անկախ Հայաստանի պետական ապարատի տարբեր օղակներում: Այսպես՝ 1997-1998 և 1999-2004 թթ. Մերուժան Վ. Միքայելյանն աշխատել է որպես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալ, իսկ 1998-1999 թթ.՝ ՀՀ էներգետիկայի նախարար, ուստի նրա դիտարկումներն ու առաջարկները հիմնվում են երկարաժամկետ փորձառության և մասնագիտական խորը գիտելիքների վրա: ՀՀ անկախության 20-ամյակի հետ կապված «ՎԷՄ»-ը պատրաստ է տպագրել նաև այլ մասնագիտական ուսումնասիրություններ: Խմբ.: Հոդվածն ընդունվել է տպագրության 30.08.2011:

նազանցի հորինված կերպարի կամ դարերով պետականագուրկ ժողովրդի խեղ-ված հոգեկերտվածքի հետևանք: Անվիճելի է այս գործոններից մի մասի բացասական ազդեցությունը, բայց, մեր խորին համոզմամբ, Հայաստանի զարգացումն էլ ավելի սահմանափակող գործոնների դերը կատարել ու կատա-րում են պետական կառավարման համակարգի թերզարգացածությունն ու նրա-նում առկա բացթողումները: Քանզի 20 տարին կարճ ժամանակ չէ, իսկ սհա Հայաստանի սահմանափակ ռեսուրսներն ու անբարենպաստ աշխարհաքաղա-քական դիրքը կամ Ղարաբաղյան հիմնահարցի առկայությունը թեև սահմանա-փակել են առկա հնարավորությունները, բայց **ամենևին էլ վճռորոշ արգելքներ չեն եղել մեր երկիրը գոնե եվրոպական միջին կենսապայմաններին հասցնելու և արդար հասարակարգի ստեղծման ճանապարհին:**

**1. Հայաստանի համար այսօր էլ հասանելի է եվրոպական միջին մակարդակը**

**Մեր կարծիքով՝ երկրի զարգացման ամենաառաջնային ու վճռորոշ գործոնը պետական մեքենայի որակն է, պետական կառավարման արդյունավետությունը:**

Որպես ասվածի ապացույց նախ՝ վկայաբերենք վերջին 20 տարիներին Հա-յաստանի արձանագրած մեկ շնչի հաշվով համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) համեստ ցուցանիշը: Այնուհետև համեմատության համար խմբավորենք նույն ժամանակամիջոցում մի շարք երկրների ցույց տված արդյունքները՝ ըստ նրանց զարգացման վրա ազդող տարբեր գործոնների և զարգացման մակարդակն արտացոլող ամենաընդհանրական տնտեսական ցուցանիշի՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի վերաբերյալ Համաշխարհային բանկի 2010 թ. տվյալների (ԱՄՆ դոլա-րով)՝: Դրանից հետո պարզ կլինի, թե որքանով են ճիշտ մեր երկրի արագընթաց զարգացմանն իբր «խոչընդոտող» գործոնների մասին մեզանում պետական մա-կարդակով բերվող «փաստարկները»: Եվ այսպես՝ Հայաստանի համեստ ցուցա-նիշն է **2998 դոլար՝ մեկ շնչի հաշվով:** Մինչդեռ...

**1-ին խումբ. վերջին տասնամյակներում պարերազմի մեջ գտնված և բնական պա-շարներով ոչ հարուստ երկրներ. Բոսնիա՝ 4492, Սերբիա՝ 5368, Խորվաթիա՝ 13736, Իսրա-յել՝ 28683, Կիպրոս՝ 31280\*:**

**2-րդ խումբ. ծովային անմիջական ելք չունեցող, ոչ մեծ և բնական պաշարներով ոչ հարուստ, բայց պեւրական համակարգի լավ կազմակերպվածությամբ երկրներ. Սլո-վակիա՝ 16397, Հունգարիա՝ 13035, Չեխիա՝ 18239, Ավստրիա՝ 44879:**

**3-րդ խումբ. նախկինում ԽՍՀՄ-ի կազմի մեջ գտնված, բնական պաշարներով ոչ հարուստ, բայց պեւրական համակարգի լավ կազմակերպվածությամբ երկրներ. Էստո-նիա՝ 13934, Լատվիա՝ 10705, Լիտվա՝ 10939:**

**4-րդ խումբ. երկարատև անկախություն ունեցող, բնական պաշարներով ոչ հա-րուստ, բայց բարձրարդյունավետ պեւրական կառավարմամբ երկրներ. Նոր Զելանդիա՝ 29352\*, Սինգապուր՝ 43324, Բելգիա՝ 43019, Ֆինլանդիա՝ 44531, Հոլանդիա՝ 47130, Իռլան-դիա՝ 45805, Դանիա՝ 55778, Շվեյցարիա՝ 67236:**

**5-րդ խումբ. բնական պաշարներով հարուստ, բայց վատ կառավարմամբ երկրներ՝ Թուրքմենստան՝ 4071, Ուզբեկստան՝ 1384, Ադրբեյջան՝ 5755, Իրան՝ 4540\*, Նիգերիա՝ 1224,**

1 Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/>.

Ալժիր՝ 4501, Եմեն՝ 1118\*, Եգիպտոս՝ 2591:

**6-րդ խումբ. բնական պաշարներով հարուստ, բայց պերական կառավարման ոչ բարձր արդյունավետությամբ երկրներ՝** Ռուսաստան՝ 10440, Ղազախստան՝ 8764, Մեքսիկա՝ 9580:

**7-րդ խումբ. բնական պաշարներով հարուստ և բարձրարդյունավետ պերական կառավարմամբ երկրներ՝** ԱՄԷ՝ 50070\*, Նորվեգիա՝ 84880, Քուվեյթ՝ 54260<sup>2</sup>:

Այժմ դիտարկենք Հայաստանի արագընթաց զարգացմանն իբր թե խոչընդոտ հանդիսացող գործոնները:

**«Փաստարկ» առաջին** Արցախյան ազատագրական պատերազմը.

Լավ կառավարման դեպքում Արցախի գոյությունը երաշխավորելու խնդիրը և ընդհանրապես՝ Ղարաբաղյան հիմնահարցը մեր զարգացման առաջնային խոչընդոտը չեն: Հայտնի է, որ որպես կանոն՝ պատերազմից հետո երկրների մեծ մասն ավելի արագ տեմպերով են տնտեսական զարգացում ապրում: Այս առումով Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո խոսուն օրինակներ են Գերմանիան, ԽՍՀՄ-ը, Ճապոնիան, Ֆրանսիան: Եվ հետաքրքրական է, որ նրանք բուռն զարգացում են ունեցել **ճիշտ երկու տասնամյակների** ընթացքում: Ավելին՝ ակնհայտ է, որ վերջին տասնամյակներում ևս պատերազմի մեջ գտնված՝ բնական ռեսուրսներով ոչ հարուստ երկրների (1-ին խումբ) զարգացման մակարդակը Հայաստանին գերազանցում է 1,5-10 անգամ: Նկատենք, որ թվարկածներից երեքը նախկինում եղել են սոցիալիստական, պլանային տնտեսությամբ երկրներ և մեզ մնան տնտեսական ու քաղաքական համակարգերի փոխակերպման խնդիրներ են լուծել: Այդ երկրները նույնպես իրենց բնակչության թվով կամ տարածքով չեն դասվում նույնիսկ միջին մեծության պետությունների շարքին: Մեզ կփորձեն առարկել, որ դրանք Եվրոպայի կենտրոնում ու հարավում տեղաբաշխված և նախկինում ԽՍՀՄ-ից անկախ պետություններ են: Այդպիսի մեկնաբանությանն ի պատասխան՝ քննենք հաջորդ «փաստարկը», որը վերաբերում է հենց նախկին ԽՍՀՄ հանրապետություններին:

**«Փաստարկ» երկրորդ. անկախության համեմատաբար կարճատև շրջան՝ 20 տարի:**

Հայաստանի անկախացումը նախկին խորհրդային պետական համակարգից, իհարկե, սահմանափակել է ապրանքների որոշ խմբերի էժան ներմուծումները և սեփական ապրանքների իրացման հնարավորությունները, սակայն այն միաժամանակ ընձեռել է զարգացման նոր, առավել լայն հնարավորություններ, որոնք վատ են օգտագործվել մեր պետական մեքենայի անորակ փոխակերպման և մինչ այժմ էլ ցածրարդյունավետ գործառնության հետևանքով: **Քաղաքական կամքի և բարձր պրոֆեսիոնալ պետական ապարատի առկայության դեպքում երկու տասնամյակը լիովին բավարար ժամանակահատված էր նոր որակի՝ ժամանակակից, խելամտորեն նախագծված ու մոքիլ պետական համակարգ, նորացված և եվրոպական միջին մակարդակի կենսապայմաններով երկիր ու հասարակություն կառուցելու համար:** Դրա վկայությունն են մերձբալթյան երկրների (3-րդ խումբ) տվյալները, որոնք Հայաստանին գերազանցում են 3,6-4,6 անգամ: 1990 թ. պետական այլ պաշտոնյաների հետ միասին գտնվելով Էստոնիայում, որը դեռևս ԽՍՀՄ-ի վերջին տարիներին ձեռնամուխ էր եղել պե-

<sup>2</sup> Ծանոթություն. այն երկրները, որոնց ցուցանիշները վերաբերում են 2009 թվականին, առանձնացվել են \* նշանով:

տության և տնտեսության համակողմանի նորացման գործին, ուներ ազգային որակյալ մտավորականություն և պաշտոնյաներ, արձանագրել ենք, որ այդ երկիրը լավ մշակված վերափոխման ծրագրով հաջողությամբ առաջ է ընթանում: Նույնը կատարվում էր նաև մյուս մերձբալթյան հանրապետություններում: Առաջին հերթին հենց այդ հանգամանքը պայմանավորեց նրանց հետագա հաջող փոխակերպումն ու առաջընթացը և դրանից հետո միայն աշխարհաքաղաքական դիրքի առավելությունները տվեցին իրենց պտուղները:

**«Փաստարկ» երրորդ՝ բնական պաշարների պակասը:**

**Պետական լավ կառավարումը մեծապես կարող է փոխհատուցել բնական հարստությունների պակասը, իսկ հակառակը գրեթե չի պատահում:** Հարուստ բնական պաշարները կամ տարածքի ու բնակչության մեծությունը ամենաառաջնային նախադրյալը չեն տնտեսական զարգացման և կյանքի որակի համար: Առաջնայինը պետական լավ կառավարումն է, որը հմտությունների հետ միաժամանակ ենթադրում է քաղաքական և ձեռնարկատիրական ազատությունների, մարդասիրության, արդարության, օրինապահության, ազգային միավորիչ նպատակների, գաղափարների ու ծրագրերի առկայություն: Ճապոնիայի օրինակը վաղուց է հայտնի, և դա բացառություն չէ: Եթե մի փոքր ավելի ուշադրություն դարձնենք 5, 6 և 7-րդ խմբերի երկրների պետական համակարգերին ու քաղաքացիական հասարակության որակներին, անմիջապես կծնվի այն միտքը, որ բնական ռեսուրսները զարգացման նախադրյալ են դառնում, եթե գործերը լավ վիճակում են պետական մեքենայի որակի առումով: Տնտեսական ու տեխնոլոգիական զարգացման բարձր մակարդակ են ապահովել զարգացած պետական կառավարմամբ երկրները (7-րդ խումբ), մինչդեռ անգամ նավթի, գազի, ոսկու և այլ հանածոների հարուստ պաշարների առկայության դեպքում, եթե բացակայում է պետական համակարգերի ու քաղաքացիական հասարակության զարգացածությունը, այդպիսի երկրների վիճակն ընդհանրապես նախանձելի չէ (5-րդ խումբ): Օրինակ՝ բնական պաշարներով ամենևին էլ աչքի չընկնող Նոր Զելանդիան 2,8 անգամ գերազանցում է Ռուսաստանի մակարդակը, 5 անգամ՝ Ադրբեյջանի, 7 անգամ՝ Թուրքմենստանի, 11 անգամ՝ Եգիպտոսի, 21 անգամ՝ Ուզբեկստանի և 21 անգամ՝ Նիգերիայի, որոնք խիստ հարուստ բնական պաշարներ ունեն: Իսկ բնական պաշարներից զուրկ Սինգապուրը Ռուսաստանի մակարդակը գերազանցում է 4, Ադրբեյջանինը՝ 7,5, Ուզբեկստանինը՝ 31, Նիգերիայինը՝ 35 անգամ:

**«Փաստարկ» չորրորդ՝ մենաշնորհները:**

**Մոնոպոլիաները կարելի է վերածել դրական գործոնի, իսկ կոռուպցիան հաղթահարելը ամենևին էլ տվայտանքներ պահանջող կամ երկարատև գործընթաց չէ:** Տարածքներով ու բնակչությամբ ոչ մեծ երկրներում, որտեղ մեծ է մոնոպոլիաների և օլիգոպոլիաների դերակատարումը, պետական բարձրարդյունավետ կառավարումը դրանք չարիքից վերածել է բարիքի (բարձր վճարվող աշխատատեղեր, հարկեր, իմիջ, ֆինանսական կայունություն, արտաքին մրցունակություն) և սովերն ու կոռուպցիան հասցրել նվազագույնի: Նման երկրները ներկայացված են 4-րդ խմբում և գերազանցում են Հայաստանի ցուցանիշը 10-22 անգամ: Դրանք չեն դասվում գերտերությունների շարքին, հիմնված չեն այլ երկրների հարստությունները ուժային մեթոդներով յուրացնելու քաղաքականության վրա, սակայն կյանքի որակով ամենաառաջատարներից են: Ավելին, Սին-

գապուրն ու Նոր Զելանդիան սկզբնապես հայտնի են եղել որպես համատարած կերպով կոռումպացված երկրներ: Սակայն նրանց իշխանությունները դրսևորել են քաղաքական կամք, երկրի շահերը բարձր են դասել ամեն ինչից (հասկանալով, որ, ի վերջո, սեփական շահերն ու հավակնություններն այդպես ավելի լավ են բավարարվում), վստահություն են ներշնչել հասարակությանը և պրոֆեսիոնալ ու խելամիտ լուծումներով արագորեն վերափոխել են տնտեսաքաղաքական համակարգը, բարձրակետին են հասցրել պետական կառավարման արդյունավետությունն ու արմատախիլ արել կոռուպցիան: Հանուն անաչառության, պետք է նաև նշել, որ բուռն զարգացում արձանագրած երկրների այն խմբերը, որոնք անցել են պատերազմների միջով կամ ունեն ոչ մեծ տարածքներ ու բնակչություն և հարուստ չեն բնական ռեսուրսներով, եթե չունեն ծովային ուղղակի ելք, ապա զոնե տեղաբաշխված են Եվրոպայում: Տեղաբաշխվածության և տրանսպորտային հաղորդակցության գործոններն, իհարկե, զգալի են, բայց ոչ այնքան, որ զարգացման մակարդակների՝ **անգամներով չափվող** խզում ապահովեն: Ի վերջո, ունենք Վրաստանի հետ համեմատության հնարավորությունը: Նշված գործոններով Հայաստանի համեմատ էական առավելություններ ունեցող այդ երկիրը մինչև Մ. Սահակաշվիլու ղեկավարության փուլը, պետական վատ կառավարման պատճառով քայքայման ճանապարհն էր բռնել և անհամեմատ զիջում էր Հայաստանին, իսկ կառավարման բարելավմանը զուգընթաց, իր բոլոր խնդիրներով ու խտտորումներով հանդերձ, Վրաստանը նյութականացնում է իր առավելությունները: Հետևողական լինելու դեպքում նա հնարավորություն է ստացել իր հետևում թողնել շատերին: Վրաստանի օրինակը լրացուցիչ անգամ ցույց է տալիս արդյունավետ կառավարման առաջնայնությունը:

Կատարենք ևս մեկ-երկու համեմատություն: Ռուսաստանի Դաշնությունը, որն իր տարածքով 206, իսկ բնակչության թվաքանակով 5,8 անգամ գերազանցում է միասին վերցրած՝ Հոլանդիայի և Շվեյցարիայի նշված ցուցանիշները, 2010 թ. մոտավորապես նրանց հանրագումարի չափ (1307 մլրդ դոլար) ՀՆԱ է ստեղծել (1480 մլրդ դոլար)<sup>3</sup>: Եվ դա այն դեպքում, երբ Ռուսաստանն իր բնական հարստություններով կամ դեպի մի քանի օվկիանոսներ ունեցած ուղղակի ելքերով համեմատելի չէ աշխարհի որևէ երկրի հետ: Իսկ Հոլանդիան և Շվեյցարիան, որոնցից յուրաքանչյուրն իրենց տարածքների մեծությամբ ճիշտ հավասար են Հայաստանի Հանրապետության և Արցախի տարածքների հանրագումարին (մոտ 41 հազ. քառ. կմ), Հայաստանի նման աչքի չեն ընկնում բնական հարստություններով:

Բավականին հետաքրքիր մեկ այլ համեմատություն. բնական պաշարների հարստությամբ, տարածքի մեծությամբ ու բնակչության թվով Բելոռուսին մի քանի անգամ գերազանցող (մասշտաբի էֆեկտ) և տրանսպորտային առավել նպաստավոր պայմաններ, գիտատեխնիկական ու արդյունաբերական ավելի մեծ ներուժ ժառանգած Ուկրաինան մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով (3014 դոլար) նրան զիջում է կրկնակի անգամ: Հայտնի է, որ Բելոռուսում հիմնականում պահպանվել է պլանային-վարչական տնտեսաձևը՝ պետական սեկտորի առաջատար դիրքերով: Իսկ Ուկրաինան փորձել է անցում կատարել ազատական տնտեսությանը: Այս համեմատությունը ցույց է տալիս, որ **եթե ազատական տնտեսական համակարգը և դրան համապատասխան պետական ինստիտուտներն ամբողջական և**

3 Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/>.

ավարտուն կերպով, պրոֆեսիոնալ հմտությամբ չեն կառուցվել, ինչպես Ուկրաինայում է, ապա այդպիսի ազատական շապիկ կրող կիսատ-պռատ տնտեսաքաղաքական համակարգն իր արդյունավետությամբ էապես զիջում է նույնիսկ պատմության կողմից խտանված, սակայն լավ կազմակերպված պլանային-վարչական համակարգին: Այսինքն՝ այստեղ նույնպես ակնհայտ է պետական մեքենայի ճիշտ կառուցման և նրա կազմակերպվածության առաջնային դերը երկրի զարգացման գործում:

Վերոհիշյալ համեմատությունները ոմանց կարող են բանավիճելու առիք տալ, թե իբր՝ ՀՆԱ-ն համակողմանիորեն չի արտացոլում երկրի տնտեսական և քաղաքական զարգացածության բազմաթիվ ծալքերը: Սա երկար արծարծված և հայտնի հարցադրում է: Իհարկե, ՀՆԱ-ի բաղադրիչներով և օգտագործման արդյունավետությամբ պայմանավորված ավելի մանրակրկիտ վերլուծությունների կարիք կա: Սակայն, բոլոր վերացարկումներով հանդերձ, մնացած գործոններն այս կամ այն կերպ իրենց արտահայտությունն են գտնում հենց այս ցուցանիշում և ընդհանուր առմամբ այն բավական հուսալի է գնահատումների համար: Ամեն դեպքում, նման թերահավատությունը փարատելու համար դիմենք նաև մեկ այլ դիտարկման: Կիրառենք կյանքի որակի ինտեգրալ ցուցանիշը: Դրա վերջին հետազոտությունը 2009 թ. տվյալների հիման վրա իրականացրել է «**International Living**» միջազգային ամսագիրը: Իրազեկ մասնագետները գիտեն, որ նման ցուցանիշն ինտեգրում է թվով 9 բաղադրիչներ՝ ապրուստի արժեք, էկոնոմիկա, մշակույթ և զվարճանքներ, շրջակա միջավայր, ազատություններ, առողջապահություն, ենթակառուցվածք, անձի անվտանգություն, կլիմա: Եվ ահա նրանում 194 երկրների մեջ կյանքի որակի ցուցանիշով Հայաստանը 96-101-րդ դիրքերում է: Մեր դիրքերը շատ ավելի հետ կրնկեն, եթե հաշվի չառնենք շրջակա միջավայրին և կլիմային առնչվող ցուցանիշները, որոնք, հասկանալի է, արդյունավետ գործունեության հետքիչառնչություններ ունեն: Վերըբերված եզրահանգումներում դիտարկված օրինակափությունները լիովին ամրապնդվում են նաև կյանքի որակի համակողմանի չափորոշիչների միջոցով: 4-րդ խմբի երկրները, բացառությամբ Իռլանդիայի և Մինգապուրի, կյանքի որակի ինտեգրալ ցուցանիշով առաջատարների շարքում են: Իռլանդիան մի փոքր հետ է մնում՝ բարձր գների պատճառով, իսկ Մինգապուրը՝ հիմնականում շրջակա միջավայրի և կլիմայի անհարմարավետության: Պատերազմների բովով անցած (1-ին խումբ), ինչպես նաև մերձբայթյան երկրներին տրվող գնահատականները ՀՆԱ-ի ցուցանիշով համահունչ են նրանց մակարդակներին, և դրանք բոլորն առաջին քառասուն երկրների շարքում են: Իսկ ահա բնական պաշարներով հարուստ, տրանսպորտային սահմանափակումներ չունեցող, բայց վատ պետական կառավարմամբ երկրները (5-րդ խումբ) տեղաբաշված են 134-193-ի միջակայքում<sup>4</sup>: Արդարացման պատրվակները՝ ազատագրական պատերազմը, շրջափակումը, պաշտպանական ծախսերը, ծովային ելք չունենալը, անշուշտ, երկրի զարգացման վրա սահմանափակող ազդեցություն են գործում: Բայց որևէ մեկը կարո՞ղ է մատնանշել անցած 20 տարիներին մեր առջև դրված այն համազգային նպատակները, որոնց իրականացմանը ձգտել են Հայաստանի իշխանությունները, որոնց շուրջ զաղափարապես համախմբել են երկրի հասարակության և ողջ ազգի կարողությունները, որդեգրել են ճիշտ ու արդարացի մոտեցումներ և չեն հասել հաջո-

4 Տե՛ս <http://rating.rbc.ru/article.shtml?2010/01/13/32673778>:

**դուքյան: Եվ եթե այդպիսի խնդիրների իրագործման նպատակ չենք դրել, ապա ուրիշ ի՞նչ արդյունք պետք էր ակնկալել:** Մինչդեռ, բացասական գործոնները մեջտեղ բերելիս, ազնվությունը, անաշատությունը և պետական գործիչներին հարիր պատասխանատվության զգացումը պահանջում են ներկայացնել նաև մեզանում առկա անհամեմատ ավելի հզոր, նպաստավոր նախադրյալները, որոնք Հայաստանի իշխանություններն ու ողջ պետությունը ծայրահեղորեն վատ են օգտագործել:

**Առաջինը** հայրենի երկիրն ազատագրելու, պաշտպանելու և շենացնելու համար կյանքը նվիրաբերելու պատրաստ, միակամ ժողովրդի անկոտրում կամքն է, որից ավելի հզոր ուժ դժվար է գտնել: Այդպիսի կամքի և միասնության դրսևորում ամեն օր չի արձանագրվում: Այն, որպես կանոն, ի հայտ է գալիս երկրի համար բախտորոշ պատմական իրադարձությունների շրջանում: Անկախացման սկզբնական տարիներին դրսևորված այդ հզոր էներգիայի կարևորությունը պատշաճ կերպով չզննահատվեց: Իշխանությունների անխոհեմության և անտարբերության պայմաններում նման թանկագին պաշարը վատնման ու փոշիացման ենթարկվեց: Այն դեռևս կարելի է վերականգնել՝ արդար և արդյունավետ պետություն հիմնելու և հստորեն կառավարելու միջոցով: Ընդ որում, **ոչ միայն Արցախի զոյապայքարը, այլև հենց արդար ու արդյունավետ պետականության կերտման խնդիրն ու գաղափարը նույնպես կարող են ժողովրդի միակամության և հավատի վերականգնման հիմք դառնալ:** Կարող են, եթե երկրի բարձրագույն իշխանությունը կամ քաղաքացիական հասարակությունը նախաձեռնեն նման համապարփակ ծրագրի իրագործումը: Պետք է ելնել այն իրողությունից, որ եթե այսօր ժողովրդի մի ստվար հատված չի մասնակցում ընտրություններին կամ պետական միջոցառումներին, որովհետև չի հավատում դրանց ազնվությանը և դերակատար քաղաքական ուժերին կամ էլ մեկ ուրիշ ստվար զանգված, այլընտրանք չունենալով, գնում է ցանկացած կեղծ ընդդիմության հետևից, դա դեռևս չի նշանակում, թե առողջ մտածողությամբ կարող մարդկանց կրիտիկական զանգված այլևս չկա: Այդ մարդիկ անհամեմատ ավելի շատ են: Նրանք պարզապես իրենց հոգեկերտվածքով խորշում են շահամոլության, դավերի ու ինտրիգների աշխարհի մեջ ներքաշվելուց: Բայց, ի վերջո, գալիս է մի պահ, երբ ազգի ու երեխաների վաղվա օրվա համար այդ ամենն էլ մի կողմ է դրվում: Գալիս է քաղաքական դաշտը առողջ և գիտելիք ունեցող մարդկանց ու նրանց հետևողների կողմից տնօրինելու ժամանակը: Սակայն ամբողջ երկրի՝ հասարակության և իշխանությունների կենսական շահերից է բխում, որ նախաձեռնողներն առաջինը լինեն իշխանությունները: **Պետության գլուխ կանգնած անհատները միշտ էլ նման դերակատարություն կարող են ստանձնել:** Օրինակ՝ Ղազախստանի նախագահ Ն. Նազարբաևը, բոլոր խտտորումներով հանդերձ, նաև միջազգային հանրության կարծիքին հակադրվելով, դեպի զարգացում է առաջնորդում այդ երկիրը՝ նրա համար իրական ճանապարհով: Նույնիսկ կրթության ոլորտում Ղազախստանն ի վիճակի եղավ իր Եվրասիական համալսարանը հասցնել որակական բարձր մակարդակի, որը սեփական վարկանիշով այժմ աշխարհի 500 լավագույն բուհերի շարքում է: Ավելի գերադասելի ու արդյունավետ ճանապարհով Մինգապուրի զարգացման ընթացքը 20-րդ դարի 60-ական թվականներից փոխել է նրա նախկին վարչապետ **Լի Քուան Յուն: Նույնն անելու հնարավորություններն ունեցել և պարբերաբար ունենում է Հայաստանի յուրաքանչյուր նախագահ:**

**Երկրորդ** նախադրյալ, բոլորս, նաև՝ իշխանավորները, ոչ առանց հիմքի խտում ենք մեր ժողովրդի մտավոր բարձր կարողությունների, մշակութային վիթխարի ժառանգության և ներկա ներուժի մասին: Այստեղ իսկապես մեր ռեսուրսներն անհամեմատելի են հարևան մրցակից երկրների հետ: Բայց պատեհ-անպատեհ հայտարարություններ անելը մի բան է, իսկ դրանց էությունն ու իրական արժեքը հասկանալը, արտաքին և ներքին կյանքում այն գործուն իրողության ու հզորության վերածելու գիտելիքներ ու կարողունակություն ունենալը՝ միանգամայն այլ բան: Այս հարցում Հայաստանի հաջորդական իշխանությունները մշտապես գիտելիքի ու գործնական հմտությունների խիստ պակաս են ունեցել:

Այս իրողությունն առանձնակի է դրսևորվում մշակույթի ոլորտում: Հայաստանի պետական մեքենան ի վիճակի չեղավ մշակութային զարգացման հեռանկարային քաղաքականություն ու ծրագիր մշակել, մշակութային ու հոգևոր ժառանգության հենքի վրա զաղափարախոսական և քարոզչական համակարգեր ստեղծել: Մշակույթի նախարարությունը միմյանցից անջատ մեծաթիվ մշակութային միջոցառումների կազմակերպումը չպետք է շփոթի մշակութային քաղաքականության հետ: Պետական մեքենան ի վիճակի չեղավ զոնե իրականացնել մեր մշակութային վիթխարի, բայց ցարքցրիվ ժառանգության հաշվառումը, գրանցումը, իր և հայ ժողովրդի իրավունքների ճանաչումը: Ավելին, պետական մեքենայի բավարար կարողության և կամքի բացակայության պատճառով ոչ միայն Թուրքիան է շարունակում ավերել կամ տիրանալ մեր մշակութային ժառանգությանը, այլև մեր անգործությունից ոգևորվել և թևավորվել են վրացիներն ու ադրբեջանցիները: Ավելի անճարակություն դժվար է պատկերացնել, երբ այսօր ադրբեջանցիներին հաջողվում է մի կողմից՝ անպատիժ ավերել, մյուս կողմից՝ միջազգային ատյաններում կասկածի ենթարկել մույնիսկ խաչքարերի հանդեպ ժառանգորդի մեր իրավունքը: Իսկ մենք ոչ անտեղի հույսեր ենք փայփայում, որ նոր հարյուրամյակում կհաջողվի մեր մշակութային ժառանգությանը ներկայանալ աշխարհին, զարգացնել փառավոր ավանդույթները և մեզ արժանի տեղ գտնել քաղաքակիրթ ազգերի մեջ:

**Երրորդը** ազգային դժբախտությունների արդյունքում ձևավորված Սփյուռքի ներուժն է: Շատ տխրեցնող է, որ Սփյուռքի կարողություններ ասելիս, որպես կանոն, իշխանավորների աչքի առաջ միանգամից հառնում են միայն փողի քսակներ: Իշխանության շատ ներկայացուցիչներ խիստ սրտնեղում են, օտարի և զծուծի տեղ դնում սփյուռքահայ հարուստներին, երբ վերջիններս իրենց կարողությունները չեն վստահում անհասկանալի և կասկածելի մեխանիզմներով գործող պետական կառույցներին ու պաշտոնյաներին: Իսկ **Սփյուռքի ներուժն ավելի շատ այլ գործոնների մեջ է՝ ամենուր նրա վաստակած հարգանքի, հեղինակության ու վստահության, բազմատեսակ կապերի և շրջապատի, պրոֆեսիոնալ ունակությունների ու նվաճումների, գիտելիքների, ինովացիաների, փորձառությունների և հայրենասիրական ոգու:** Այդ ամենն, իհարկե, գրեթե անօգտագործելի են մնում մեր պետական պաշտոնյաների բանակի համար անհասկանալի և վերացական լինելու պատճառով: Նույնիսկ գերտերությունների համար երազանքի նման բան է աշխարհի բազմաթիվ երկրներում ունենալ այդպիսի հենք և կարողություն՝ համակարգված կերպով տեղեկացվելու, խորհրդատվություն ստանալու, քարոզչություն անելու, փորձարկված կապեր օգտագոր-



ծելու, բիզնես կամ քաղաքական նախագծեր իրականացնելու, ֆինանսական, ապրանքային և այլ շուկաներ մտնելու կամ դրանցից օգտվելու առումով: Աղբյուրների՝ 20-25 տարվա պաշարով նավթն ավելի մեծ հնարավորություններ չի ընձեռում և պետք չէ գերազնահատել այդ անցողիկ գործոնի իրական հնարավորությունները: Հայկական Մփյուռքի քաղաքական ու տնտեսական կարողություններն ու կապերը կարևորվում են արևմտյան, նաև՝ մեր հարևան պետությունների կողմից, որոնք փորձում են օգուտներ քաղել այդ ամենից: Մինչդեռ, երկու հայկական պետական մեքենաների ունակությունները և մտքի թռիչքը անցած 20-ամյակում հիմնականում սահմանափակվել է «Հայաստան» հիմնադրամի միջոցով լավագույնը՝ տարեկան մինչև 20 մլն. դոլարի հանգանակություն կազմակերպելու, սփյուռքահայ գործարարներին զանազան խոստումներով հրապուրելով՝ մի քանի, այդ թվում՝ ցուցադրական ծրագրեր իրականացնելու և հայրենիքում ներդրումներ կատարելու վերացական կոչեր անելու ձեռնարկներով: Իրականում, նույնիսկ ճանաչված սփյուռքահայ գործարարները, որոնք ցանկանում են գործել ազատ մրցակցային և ոչ խտրական միջավայրում, պետական մեքենայի ապօրինություններից գլուխները բռնած՝ ցիրուցան են լինում: Ամենաթարմ օրինակը 2011 թ. հունիսի 29-ին Հայաստանի ՋԼՄ-ներով տարածված՝ ցորենի արտադրություն սկսելու **Վահագն Հովնանյանի** բիզնես-ծրագրի դեմ ուղղված բացահայտ շանտաժն էր<sup>5</sup>:

Հայաստանի պետական մեքենան չի կարողանում սնուցվել Մփյուռքի ներուժից ու նաև՝ անկախ պետականության ընձեռած հնարավորությունները ծառայեցնել Մփյուռքի հատվածական և ընդհանրական կարողություններն էլ ավելի հզորացնելուն: **Մեր պետական մեքենան դեռևս չի գտել Մփյուռքի համախմբման և նրա հետ համակարգված, միասնական ծրագրեր ու գործողություններ իրագործելու ճիշտ մեկնակետերը, թիրախներն ու մեխանիզմները:** Դեռևս հայ իշխանավորները չեն դրսևորել առանց անձնական կամ խմբակային շահերին հետամուտ լինելու՝ Մփյուռքի ուժերի համախմբման, միասնական ուղեգծի ու կառույցների ստեղծման որևէ խելամիտ նախաձեռնություն: **Իսկ երբ չկա գործողություն, չկա նաև արդյունք:**

**Չորրորդը** մեր աշխարհաքաղաքական դիրքն է, որը երկսայրի սրի է նման: Վերջին տասնամյակներում ամենակարևոր զարգացումները տեղի են ունենում այն տարածաշրջանում, որին ամերիկացի քաղաքագետներն անվանում են Մեծ Մերձավոր Արևելք: Այստեղ Հայաստանի դիրքն ու իրավունքները թույլ են տալիս որոշ սկզբունքային ծրագրերի ճամփան բանալ և միաժամանակ՝ այլոց արգելապատնեշը դառնալ: Դրանց տիրապետում և հնտորեն օգտագործում են ուրիշները, ինչի վկայությունն է ուժի կենտրոնների երկարատև ու համառ պայքարը՝ Հայաստանն իրենց ուղեծրում ներառելու կամ պահելու համար: Մինչդեռ, հայ հասարակական միտքն ու հատկապես պետական մեքենան թերզարգացածության և վատ ինքնակազմակերպման պատճառով տեսնում են իրավիճակի միայն խոցելի կողմերը և հանդես են գալիս իրադարձությունների հոսանքին հանձնվածի կարգավիճակով: **Մենք ունենք շատ ավելի ուժեղ և ճկուն դիրքերից հանդես գալու հնարավորություններ, որոնք իրագործելի կդառնան տաղանդավոր գործիչներով հագեցած, առողջ պետական մեքենայի առկայության պարագայում:**

Այսպիսով, անցած 20 տարիների ընթացքում Հայաստանն ունեցել է ներ-

<sup>5</sup> Տե՛ս «168 ժամ», 30.06.2011:

դաշնակ հասարակություն ստեղծելու և իր տնտեսության զարգացածության ու կենսապայմանների առումով առնվազն **մերձբալթյան երկրների, Հունգարիայի, Խորվաթիայի, Չեխիայի կամ Սլովակիայի մակարդակներում** լինելու բոլոր անհրաժեշտ հնարավորությունները: Պարզապես մենք չենք ունեցել զարգացած պետական մեքենա, իսկ իշխանությունները նման խնդիր չեն առաջադրել: Գուցե հիմա՞ դա արվի: Այս առումով, կարծում ենք, Վիկտոր Հյուգոն հայ ազգին չի բացառել, երբ ասել է. «**Ոչինչ այնքան չի նպաստում ապագայի ստեղծմանը, ինչպես համարձակ գաղափարները**»<sup>6</sup>:

## 2. Զարգացած պետություն կառուցելու համար 20 տարին քի՞չ է, քե՞ շատ

Հարցն առաջին հայացքից գուցե պարզունակ թվա, բայց իրականում այն խորքային է ու շատ կարևոր Հայոց պետականության և հայ ազգի հետագա ճակատագրի համար: Թեև այն հաճախ է շոշափվել, բայց դեռևս չի արժանացել խորքային քննարկման, առավել ևս՝ անաչառ գնահատականի: Նման հարցադրումներ հնչել են կա՛մ հորելյանական տարեթվերը նշելիս, կա՛մ ընտրապայքարների ընթացքում: Երկու դեպքերում էլ մոտեցումները եղել են մակերեսային, կոնյունկտուրային ու նաև գերծ չեն եղել նեղ-քաղաքական շահերի թելադրանքից: Որպես կանոն, ընդդիմությունը միշտ ձգտել է չնկատելու տալ 20 տարիների ընթացքում արձանագրված ձեռքբերումները և ներկայացրել է ծայրահեղորեն սուբյեկտիվ գնահատականներ: Իսկ դա ունեցել է հակադարձ էֆեկտը, քանի որ իշխանության ներկայացուցիչներին հնարավորություն է տվել բերել կոնկրետ փաստարկներ և դրանով շրջանցել չարվածի և սխալների գնահատումները, այսինքն՝ խուսափել հարցադրումներին ամբողջական և խորքային պատասխաններ տալուց: Միանգամից նշենք, որ զարգացած երկրներին բնորոշ արդյունավետ պետական համակարգ ստեղծելու համար 20 տարի ժամանակահատվածը լիուլի բավարար էր: Այս առումով բոլորովին էլ համադրելի երևույթներ չեն պետության և մարդու հասունության փուլերը՝ նրանց տարիքների նույն մեծությունից ելնելով: Պետական մեքենայի հասունության համար նույնիսկ 10 տարին լիուլի բավարար ժամանակահատված է: Որևէ երկրի տնտեսական ու քաղաքական համակարգերի արդյունավետ վերափոխումն ավելի երկար ժամանակահատվածում տեղի չի ունենում: Ուստի պետք չէ անտեղի քավության նոխազներ դարձնել Արցախն ու անկախ պետականությունը կամ էլ հայի բախտն ու աշխարհաքաղաքական դիրքը: Երկիրն իսկապես սիրող մարդը երեսպաշտից ու նյութապաշտից առաջին հերթին տարբերվում է նրանով, որ **առաջինը** չի տրտնջում խոչընդոտներից և միշտ էլ համառորեն ու խելամտորեն լուծումներ է գտնում, իսկ **երկրորդը** իր անկարողությամբ կամ եսակենտրոն շահերով պայմանավորված՝ անհաջողությունների արդարացումներն է փնտրում:

Վերջին տասնամյակում վատահորեն կարող ենք առանձնացնել 4-5 տարվա մի ժամանակահատված և մանրամասն փաստերով ու թվերով ապացուցել, որ նույնիսկ չունենալով բավարար չափով համակարգված, ինստիտուցիոնալ առումով ամբողջական և ճիշտ կառուցված պետական մեքենա, պարզապես

6 Афоризмы, Минск-Москва, 2003, с. 60.

եղածը վարչական լծակներով «ձգելու» և կադրային կազմի մասնակի բարելավումների միջոցով հնարավոր դարձավ հասնել տնտեսական կյանքի շոշափելի աշխուժությանը, աղքատության կրճատմանը, պետական ֆինանսների կայունացմանը, ներդրումների աճին, պետության հեռանկարի հանդեպ հավատի ավելացմանը և արտագաղթի դադարեցմանը: Անշուշտ, միայն վարչական ռեսուրսի արդյունավետությունը սահմանափակ է և ոչ երկար կիրառելի: **Բայց ավելի կատարյալ մեքենա կառուցել մեր իշխանություններն ի զորու չեղան կամ չցանկացան:** Նաև՝ կադրային առումով խոտանը շուտով հեղեղեց պետական մեքենան: **Ուստի այն հայտարարությունները, թե իբր իշխանությունների կողմից այս առումով արվել է գրեթե հնարավորը, չեն դիմանում որևէ քննադատության:** Իսկ այն տրամաբանությունը, թե այլ ճանապարհ չկա, այսինքն՝ ժողովուրդը պետք է տևական զրկանքներով ու համբերատարությամբ շարունակի հանդուրժել առկա արատավոր պետական մեքենան, իրական հիմք չունի: Դրանում չկա քաղաքական հեռատեսությունից կամ փորձառությունից բխող մոտեցում, թեև մնան հայտարարություններով հանդես եկող քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները անցած 20 տարիների ընթացքում փորձել են հենց այդպիսի կերպար ընդունել: Եվ հետո, եթե մի բան մեկի համար անհասկանալի կամ անհասանելի է, ապա դա չի նշանակում, թե այն բոլորի համար է այդպես: Նույնն էր նաև Ղարաբաղյան պատերազմի ժամանակ, երբ պատմությունից դաս առած ուժերը տուրք չտվեցին ամենավերին օղակների պարտվողական «իրատեսությանը» կամ ինչ-ինչ «հաշվարկներին»:

**Հայաստանի ներկա պետական մեքենան, ընդհանուր առմամբ, նախաձեռնությունից զուրկ մարդկանց մի անորոշ խառնազանգված է, որոնք, որպես կանոն, չտիրապետելով իրենց մասնագիտությանն ու պարտականություններին, նաև խիստ ալարկոտ են:** Առանձին սրտացավ անհատները նրանում աննշան փոքրամասնություն են կազմում, իսկ մեկն ի զորու չէ աշխատել 50-ի փոխարեն: Պետական մեքենային անհրաժեշտ են նվիրյալ անհատներ, և հայ ազգն ունի այդպիսի տաղանդներ: Իշխանավորներն իրենք են պարբերաբար խոսում մեր մարդկային բարձր ներուժի մասին, ուստի հարկ է, որպեսզի խոստովանեն, որ ամենաճիշտ մտածելու ունակությունը միայն իրենց չի տրված: Ազգի ու պետության ապագայի և հենց իրենց ունեցվածքի պահպանման ու բազմապատկման համար նրանք պետք է ավելի խելամիտ լինեն, ներգրավեն կարող մարդկանց, լսեն նրանց խորհուրդները: Բարեբախտաբար, այսօր, նույնիսկ զարգացած երկրներում, թե՛ տեղացի և թե՛ Հայաստանից, Թուրքիայից, Լիբանանից, Իրանից ու Սիրիայից տեղափոխված հայերը հաջողությամբ կարևոր դիրքեր են նվաճել ինչպես պետական ծառայության, այնպես էլ քաղաքականության, բիզնեսի, գիտության ու մշակույթի ասպարեզներում: Սակայն Մեծ Բրիտանիայի առողջապահության նախկին հայ նախարարի մնացած անձանց անհնար կլինի նվաստացնել ու ասել՝ եկ ծառայիր՝ մեր ինքնասիրահարված նախարարների մոտ և ժամերով սպասիր՝ նրանց նշանակած հանդիպումներին ներկա լինելու համար: Իսկ Կալիֆոռնիայի նախկին նահանգապետ Ջորջ Դեոբեյջանի, կամ տնտեսագետներ Աբել Ադանբեկյանի և Տարոն Աջեմօղլուի մնացած անհատների խորհուրդներն ու կարծիքները խելքի ու գիտելիքի ծով մեր պաշտոնյաների համար, հավանաբար, ավելորդ են...

Մեծ հաշվով, մնացած անհատական մոտեցումների դիտանկյունից է, որ անհ-

րաժեշտ չեղան նաև «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի կամ Քրքր Քրքրյանի հարյուր միլիոնավոր դոլարները: Ներմուծումների մեծա- շնորհները «նոմենկլատուրային» դեռևս երկար տարիներ լավ փողեր կբերեն: Էլ ի՞նչ խորհուրդ ու գիտելիք: Միայն թե այդ «նոմենկլատուրան» չի հասկանում, որ ինքն ու երկիրը տարեցտարի հետ են մնում աշխարհից, և ջրի բերածը ջուրն էլ կտանի:

**Մի օրե բավարար ժամանակահատված չէ 20 տարին**, երբ այդ ընթացքում աշխարհը հասցրել է հիմնովին փոխվել. հեղաշրջվում են ոչ միայն տնտեսական խորքերը, այլև արտա- նմանասանիկները, հիմնովին վերափոխվել են և՛ տնտեսական, և՛ նյութի կազմության ու հար- կությունների վերաբերյալ պատկերացումները: Աշխարհակարգի կրկնակի փոփոխություն է տեղի ունեցել՝ երկբևեռից միաբևեռի, հետո էլ սկսել է անցումը բազմաբևեռի: Աշխարհի անկարգավիճակը արտաբնական մեծ յոթնյակի ակումբը քսան տարում փոխակերպվել է նախ՝ ութնյակի, հետո էլ՝ քսանյակի: Բնությունների ու բջջային հեռախոսակապի համաշխարհային ցանցերն էլ են վերջին 20 տարիների արդյունք: Այս ընթացքում աղքատության ճիգերնե- րից ազատվելով՝ հսկա Չինաստանը վերածվել է գերտերության, աշխարհի հզորներին ծառայող ու ֆինանսական քայքայման մեջ իրված հեղափոխական թուրքիս ինքն է դարձել հզոր: Երկու տասնամյակը բավարար էր, որպեսզի 1965 թ. նախկին գաղութի կարգավիճա- կից դուրս եկած, կոռուպցիայի մեջ թաթախված, աղքատ Մինգապուրն իր ասիական խառը բնակչությամբ և ասիացիներից կազմված կառավարությամբ վերածվեր նման չարիքները մոռացած երկրի, որն իր 0,7 հազ. քմ տարածքի վրա այժմ 222 մլրդ. դոլարի ներքին արդ- յունք է ստեղծում և համարվում է աշխարհի ամենաբարեկեցիկ և տեխնոլոգիապես առաջատար երկրներից մեկը<sup>7</sup>: Այսինքն՝ Հայաստանից 58 անգամ փոքր տարածքում, չու- նենալով բնական հարստություններ, նա 24 անգամ ավելի արդյունք է ստեղծում: Էստո- նիան 15 տարում իր ՀՆԱ-ի ծավալները 1,7 մլրդ դոլարից հասցրել է 23,7-ի և ընդամենը 5 տարում դարձել է Եվրոպայի ամենաարագ աճող տնտեսությունը<sup>8</sup>: Արաբական Միացյալ Էմիրությունները, ուր դեռևս 1960-ական թվականների կեսերին համապարօտ ուղիեր ու վրաններ էին, ուր էլեկտրական լուսավորությունն ու հեռախոսակապը միայն կառավարա- կան հիմնարկներում էին, գրեթե չկային ասֆալտապատ անասարհներ, 20 տարիների ըն- թացքում վերածվել են ժամանակակից երկրի: Եվ եթե 1980 թ. նրա ՀՆԱ-ի մոտ 73 %-ը բա- ժին էր ընկնում նավթին, ապա արդեն 2008 թ. 260 մլրդ դոլարի մեջ այն իջել է մոտ 7 %- ի<sup>9</sup>:

**Ուրեմն որքա՞ն օրինակներ են հարկավոր մեր իշխանություններին անցած 20 տարիների առնչությամբ:**

Եթե հիշենք, որ Հայաստանում անկախության շրջանում պետական իշխա- նության անձնակազմի պատմական սերնդափոխություններ են տեղի ունեցել, ապա կհասկանանք, որ 20 տարին շատ երկար ժամանակ է: Պետական մեքենան կոմունիստների սերնդից անցել է մեկ ուրիշին, իսկ այժմ արդեն անցնում է երրոր- դին: Նույնը՝ հասարակական կյանքի մյուս ոլորտներում: Սակայն մարդկանց սերնդափոխությանը չի հետևել հանրային կյանքի և պետական մեքենայի **ինս- տիտուցիոնալ սերնդափոխությունը**:

Ավելին՝ եթե անցած 20-ամյակում մեր ունեցած առաջընթացը ծավալվել 20-րդ դարի 80-90-ական թվականներին բնորոշ իրողությունների պայմաններում, ապա այն, իր բոլոր խորություններով հանդերձ, կարելի կլիներ գնահատել ոչ միայն բավարար, այլև հուսալի:

7 Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD>  
8 Տե՛ս <http://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.CD>  
9 Տե՛ս <http://ru.wikipedia.org/wiki/>

Բայց աշխարհն այսօր արագ է փոփոխվում: Տարածաշրջանների վերաշեղանների փուլերն արդեն 7-10 տարվա պարբերականությամբ են ձեռք բերել: Միջազգային փնտրությունը, համաշխարհային շուկաները, սպրանքների ու ծառայությունների փաստական հարստացումը, փեխնոլոգիաներն ու բրենդները շատ արագ են փոփոխվում: Նախկինում կայուն թվացող շուկաներում, որտեղ կարծես թե հավերժորեն որոշված էին բրենդներն ու խաղացողները, արագորեն նոր ֆիրմաներ ու երկրներ են ներխուժում և դառնում կանոնների թելադրողներ: Ամենաբուռն զարգացումներն այսուհետ տեղի են ունենալու հարկապես «Մեծ Մերչանթր Արևելք» կոչվող տարածաշրջանում, որը եթե մինչ այժմ քաղաքագետների մտավարժանքների դաշտ էր, այսօր արդեն վերածվել է համաշխարհային իրադարձությունների կիզակետի: Սա Հայաստանի համար հղի է ինչպես կործանարար վտանգներով, այնպես էլ կարող է բնօրինակ լուրջ ձեռքբերումների հնարավորություններ:

**Հետևաբար՝ մեզ համար միակ և ամենահուսալի ճանապարհը կամ միջոցը բարձր մակարդակով կազմակերպված պետականություն և հասարակություն ունենալն է:** Տարածաշրջանային զարգացումների թե՛ քառասյին, թե՛ խաղաղ սցենարների դեպքում միայն այդպիսի կազմակերպվածությունն ու որակները կարող են ապահովել մեր անվտանգությունն ու գոյությունը: Պատմությունը միշտ էլ լուրջ շաներ է տվել և անխուսափելիորեն էլի՛ է տալու: Այդ շաներն օգտագործում են այն ազգերն ու երկրները, որոնք պատրաստ են շրջադարձերի: Ներկրումների, ներքին առևտրի կամ կոնյակի սպիրտի գինաբրուքի թմբիրից դուրս գալու կամք չդրսևորող ազգերն ու նրանց իշխանությունները կկորցնեն ամեն բան: Եվ նախորդ դարերի պես ոչ թե կորուստներ, այլ ձեռքբերումներ ունենալու համար հայ հանրությունն ու Հայաստանի իշխանավորները պետք է իրենց մտքում ու գործողություններում մեկընդմիջտ որդեգրեն **ժամանակը** քանկ գնահատելու, **20 տարին մեկ դարի** տեղ ծառայեցնելու վարքագիծը:

### 3. Ախտաճանաչում. անկատար, անարդյունավետ և անարդար պետական մեքենա

**Պետական մեքենան բազմաշերտ, բազմաբաղադրիչ, մշտապես փոփոխվող բարդագույն սոցիալական համակարգ է, որի ամբողջական և համակողմանի ներկայացման համար մեկ հոդվածի ծավալները խիստ սահմանափակ են:** Այդ պատճառով կենտրոնանա՞նք մեր հասարակության համար առավել հրատապ հիմնախնդիրների վրա:

ա) Հայաստանի պետական կառավարման ներկա համակարգի ամփոփ գնահատականը

Գոյություն ունեն պետական կառավարման համակարգի կայացածության և արդյունավետության գնահատման տարբեր չափորոշիչներ և մեթոդաբանություն: Տվյալ դեպքում, մեթոդաբանական այլակարծություններից խուսափելու նպատակով օգտվենք հենց ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ<sup>10</sup> հաստատված «Կայուն զարգացման ծրագրի» մեջ բերված

<sup>10</sup> Դրովածում թվարկվող՝ ԳԳ կառավարության այս և հաջորդ որոշումներին կարելի է ծանոթանալ gov.am և artis.am կայքերում, ուստի կրկնություններից խուսափելու համար կրավարարվե՞նք միայն մեկ հղումով:

զնահատականներից, որոնք կատարվել են Համաշխարհային բանկի (ՀԲ-ի) կողմից: Դրանք մեր պետական կառավարման համակարգի ցածր որակի ամենացայտուն վկայությունն են: Այսինքն՝ 20 տարիների ընթացքում իրականացված «ռեֆորմները» (դրանց մասնակի հաջողություններն ու առաջընթացը հաշվի առնելով հանդերձ), ընդհանուր առմամբ, չեն եղել բավարար չափով արդյունավետ: Մասնավորապես, հայտնի է ՀԲ-ի կողմից մշակված՝ պետական կառավարումը զնահատող թվով վեց ցուցանիշների համախումբը: Դրանցից երկուսին՝ **քաղաքացիական հասարակության մասնակցությանը իշխանության ձևավորման գործընթացում, խոսքի և մամուլի ազատությանը**, ինչպես նաև քաղաքական կայունությանը անդրադարձ չենք կատարի: Մրանք ևս մեծապես պայմանավորում են պետական մեքենայի որակը, սակայն կառավարման արդյունավետության բուն զնահատականը չեն արտացոլում: Մյուս չորս ցուցանիշների մասով վիճակը 2007 թ. արդյունքներով այսպիսին է (զնահատումը կատարվում է 0-100 բալ համակարգով).

	ՀՀ	Վրաստան	Սլովենիա	ԱԵՄԲ միջին
Կառավարման արդյունավետություն	46.4	52.1	83.4	62.0
Կառավարության կարգավորման գործառույթի որակ	60.2	58.7	74.8	68.1
Օրենքի գերիշխանություն	40.5	42.9	75.2	54.4
Կոռուպցիայի վերահսկելիություն	30.0	48.3	78.3	56.9

2011 թվախ-սեպտեմբեր, 3 (35) հոլիս-սեպտեմբեր, 2011 Պ (10) Գրքի, Բիվ 3 (35)

Սլովենիայի ցուցանիշները բերում ենք՝ փաստելու համար, որ հնարավոր էր մեկ-երկու տասնամյակում իրականացնել հասարակարգի փոխակերպում, ստեղծել արդյունավետ պետական կառավարման համակարգ, իսկ ցանկացած երկրի տնտեսական զարգացման արդյունքներն առաջին հերթին պայմանավորվում են հենց վերջինիս արդյունավետությամբ: Բերված տվյալներն ակնառու կերպով ցույց են տալիս Հայաստանի անմխիթար վիճակը ոչ միայն արդյունավետ պետական կառավարմամբ աչքի ընկնող Սլովենիայի, այլև **Արևելյան Եվրոպայի և Մերձբալթիկայի (ԱԵՄԲ)** երկրների միջին ցուցանիշի համեմատ: Նույնիսկ Վրաստանին է հաջողվել վերջին 4-5 տարիների ընթացքում բարելավել նախկինում էապես հետ մնացող իր դիրքերը և զգալիորեն առաջ անցնել Հայաստանից:

Որպեսզի մեր պետական մեքենայի ոչ ճիշտ կառուցման և ցածր արդյունավետության վերաբերյալ որակումները չմնան միայն ակադեմիական բնույթի դատողությունների հարթությունում, ներկայացնենք կոնկրետ օրինակներ ու փաստեր: Պետական մեքենայի կայացածության և որակի ամենաընդգրկուն ցուցիչներից մեկի դերում կարող են հանդես գալ բնակչության արտագաղթի տվյալները. ցանկանում են ապրել տվյալ երկրում, թե՞ հեռանում են նրանից: Հենց պետական մեքենայի անտարբերությունը և անկարողունակությունն է զլխավոր պատճառը, որ հայ մարդը լքում է իր երազած անկախ հայրենիքն ու արտագաղթում: Դա զլխավորապես տեղի է ունենում Հայաստանի պետական մեքենայի կողմից հասարակության մեջ արդարություն, կենսապայմաններ և հե-

ՎԵՄ համահայկական հանդես

ռանկարներ (հույս) արմատավորելու կամ այդ ամենին խոչընդոտելու փաստացի գործողությունների արդյունքում: Ըստ տարբեր գնահատականների՝ 1991-2009 թթ. 0,8-1,3 մլն. մարդու մշտական արտագաղթից հետո էլ Հայաստանից մշտապես հեռանալու ցանկություն ունի երկրի բնակչության 39 տոկոսը, այսինքն՝ լրացուցիչ 1,2-1,3 մլն. մարդ (բրիտանական Gallup international-ի 2010 թ. անցկացրած հարցումներով): Վրաստանում այս տոկոսը կազմել է 14, Ադրբեջանում՝ 12<sup>11</sup>: UNICEF-ի կողմից իրականացվող «Պատանեկությունը հնարավորությունների տարիք է» ծրագրի շրջանակներում 2011 թ. Երևանի մի շարք դպրոցներում անցկացված սոցիալական արդյունքներով 16 տարեկան աշակերտների 85 տոկոսը նշել են, որ իրենց ապագան Հայաստանից դուրս են տեսնում<sup>12</sup>: Ուստի ուղղակի այնչեղում է կառավարության հանգստությունը, երբ հայտարարվում է, թե արտագաղթի միտումներում արտառոց ոչինչ տեղի չի ունենում: Նախորդ տարիներին դադարած արտագաղթը՝ լինի տնտեսական ճգնաժամի կամ այլ գործոնների ազդեցությամբ, կրկին վերսկսվել է: 2009 թ. մոտ 25 հազ. մարդու փոխարեն բնակչության տեղաշարժի բացասական հաշվենագորդը 2010 թ. դարձել է 29 հազ., այսինքն՝ աճել է 16 %-ով<sup>13</sup>: Ինչպե՞ս հասկանալ 2009 թ. 15 % տնտեսական անկումից հետո 2010 թ. 2,6 % տնտեսական վերականգնումը գոհացնում է, իսկ բնակչության արտահոսքի 16 %-ով ավելացումն արտառոց չի՞ գնահատվում: Քանզի եթե արտառոց բան չկա, միջոցներ էլ չեն ձեռնարկվի...

Եվ այժմ արդեն ունենք նման անհոգության ու անգործունակության տազնապեցնող արդյունքները: 2011 թ. առաջին կիսամյակի արդյունքներով՝ ծնունդների թիվը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 4,4 տոկոսով նվազել է: Ազգային վիճակագրական ծառայության բնակչության մարդահամարի բաժնի պետ Կ. Կոյունջյանի գնահատմամբ՝ նույն ժամանակահատվածում բնական հավելածը նվազել է 20, 5 տոկոսով, ինչի դեպքում չի կարող ապահովվել բնակչության թվաքանակի պարզ վերարտադրությունը<sup>14</sup>: Իսկ սա արդեն ժողովրդագրական տեղաշարժերը «սեզոնայնությամբ» մեկնաբանող՝ անհոգության, մակերեսային մտավարժանքների ու չհաջողված կատակների հարմար առիթ չէ:

## բ) Հասարակարգի փոխակերպման անհաջող սկիզբը

Հայաստանի անկախացման առաջին տարիներին մարդկային բարձր որակներ և պետական կառավարման բավարար գիտելիքներ ու հմտություններ ունեցող իշխանության առկայության դեպքում մեծ հնարավորություն կար ստեղծելու որակյալ պետական մեքենա: Ընդ որում, հասարակարգի վերափոխման գործընթացը պետք էր սկսել հենց պետական մեքենայի վերափոխումից: Մինչդեռ, նոր իշխանությունների անբավարար արհեստավարժության պատճառով առանց ամբողջական ռազմավարության ու համակարգված ծրագրերի կյանքի կոչված «բարեփոխումներ» անունը կրող «դակիչների ու

11 <http://www.gallup-international.com/>:

12 Տե՛ս Մ.Մանվելյան, Ապագան Հայաստանից դուրս է, «Հայկական ժամանակ» օրաթերթ, Եր., 04.03.2011թ.:

13 Տե՛ս «Իրատես դե ֆակտո», Եր., 25.05.2011թ.:

14 Տե՛ս <http://www.regnum.ru/news/fd-abroad/armenia/1434750.html>

մկրատների» տակ առանձին-առանձին հայտնվեցին տնտեսական ու սոցիալական ոլորտները՝ ուշադրությունից դուրս թողնելով **պետական մեքենան**: Հասարակարգը փոխակերպման ենթարկող սկսնակ պաշտոնյաները այդ ամենի վերաբերյալ խիստ պարզամիտ պատկերացումներ ունեին և կարծում էին, թե փոխակերպումը պետական սեփականությունը մասնավորի վերածելն է: Այսպես՝ գյուղատնտեսության մեջ դա պատկերացում էին հողատարածքը, գույքի քանակը կամ անասնազլխաքանակը գյուղի բնակչության թվաքանակի վրա բաժանելու թվաքանական գործողության տեսքով: Նույն պարզունակ գիտելիքները կյանքի կոչվեցին մաս վաուչերային մասնավորեցման գործընթացում: Արդյունքում, ըստ էության, ունեցանք սոսկ անձերով նորացված, սակայն **ինստիտուցիոնալ առումով ու գործելաոճով նույն խորհրդային վարչահրամայական պետական մեքենան՝ բոլշևիկների իշխանության վաղ շրջանին բնորոշ հախուռնությամբ ու արկածախնդրությամբ: Եվ այն գործի դրվեց... արմատապես նոր քաղաքական ու տնտեսական կարգեր ստեղծելու համար: Եվ 1990-ականների համեմատ որոշ չափով, այն էլ՝ տարերայնորեն ու ոչ արմատապես բարելավված այդ նույն մեքենան է մինչ օրս գործում Հայաստանի Հանրապետությունում**: Սա պարզապես սարկազմ է, քանզի դժվարանում ենք ասել, թե ինչու՞ կանխավ ձախողման դատապարտված նման պլանն ընտրեցին միջազգային կառույցները, որոնք ստանձնել էին հասարակարգի փոխակերպման ճարտարապետների դերակատարությունը: Ի վերջո, Հայաստանի սկսնակ իշխանությունները լոկ նրանց աշակերտների ու կատարողների դերում էին: **Այս ամենի արդյունքում՝ Հայաստանի պետական կառույցները մինչ օրս գործում են միմյանցից կտրված՝ ամեն մեկն իր համար**: Այսօր էլ միայն երկրի նախագահի իշխանությունն է նրանց կապակցում միմյանց: Օրինակ՝ Կենտրոնական բանկը վերջին տասը տարում դարձել է պետություն պետության մեջ: ԿԲ-ն տնտեսության, բիզնեսի, հանրության և կառավարության շահերի անտեսման հաշվին աշխատում է ինքնաբավարարման և ինքնաապահովագրման ամենախիստ ռեժիմով, որից **տպավորություն է ստեղծվում, թե ամբողջ երկրի կոչումը ԿԲ-ի գլխավորած բանկային համակարգին բոլոր տեսակի ռիսկերից պատնեշելն ու նրա գերշահույթների ապահովումն է**:

Այս հարցադրումը տարբեր հասարակարգերում աշխատած պետական պաշտոնյայի տեսակետ է, ուստի ավելորդ է անգամ հիշեցնել, որ թեև հասկանալի պատճառներով կարևորում ենք երկրի ֆինանսական համակարգի կայունությունը, բայց մեր համար վիճարկելի է Հայաստանի բանկային համակարգի արդյունավետ գործունեությունը՝ ԿԲ-ի գլխավորությամբ, որովհետև նրանց հատկացված **ներկա ջերմոցային պայմանները ստեղծվել են երկրի զարգացումը սահմանափակելու հաշվին**: Այդ գնով ու նման եղանակով ֆինանսական կայունության ապահովման քաղաքականությունը վերախմաստավորման կարիք ունի: Այն մեքենան, որը ղեկավարում ու կազմակերպում է վերափոխումները, հենց ինքն է շատ հեռու ինստիտուցիոնալ և կադրային առումով բարվոք լինելուց: Հետևաբար, նրա իրականացրած բոլոր «բարեփոխումները», որպես կանոն, ձախողվել ու ձախողվում են նույնիսկ այն պահին, երբ երկրի բարձրագույն ղեկավարությունն իսկապես հետաքրքրված է եղել դրանց դրական արդյունքներով: Ստացվում է Ռուսաստանի նախկին վարչապետ, լուսահոգի Վիկտոր Չեռնոմիրոյի թևավոր դարձած ասույթի հայկական տարբերակը. **«Ինչպիսի ռեֆորմ-**



**ներ էլ իրականացնում ենք, վերջում ստացվում է ավելի մեծ ձևախեղում...»:** Արդյունքում՝ երկրների մրցունակության սանդղակում Հայաստանը 133 երկրների մեջ այսօր 97-րդ տեղում է, երբ Վրաստանն արդեն 90-րդ, Ադրբեջանը 51-րդ տեղում են<sup>15</sup>:

Անցած 20 տարիների ընթացքում Հայաստանում այդպես էլ չհաջողվեց ձևավորել իշխանությունը պարզունակ միջոցներով պահպանելու մտածելակերպից զերծ և օրվա ընթացիկ խնդիրներից գլուխը վեր բարձրացնելու կարողություն ունեցող պետական մեքենա և իշխանություն: Մեր պետական մեքենան այնպես չի կառուցված, որ ընթացիկ խնդիրներին զուգահեռ, բավարար խորությամբ ու համակարգված կերպով պրոֆեսիոնալ աշխատանք կատարի՝ հեռանկարում սպասվող արտաքին ու ներքին մարտահրավերներին արձագանքելու և զարգացման ուղիներ ու լուծումներ գտնելու համար:

Անաչառ լինելու համար պետք է շեշտել, որ այս գործում բեկում մտցնելու սկիզբը կարող էր դառնալ ՀՀ կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ հաստատված «Կայուն զարգացման ծրագիրը»: Հատկապես հուսադրող էր այն հանգամանքը, որ ծրագիրը հասարակական-տնտեսական կյանքի հիմնական ոլորտների վիճակը գնահատելու և մինչև 2021 թ. ուղենիշերը նշելու հետ միաժամանակ, պարունակում էր երկրի ինստիտուցիոնալ արդիականացման, պետական կառավարման, դատաիրավական համակարգերի բարեփոխումների կոնկրետ նպատակակետեր և ուղիներ: Անվիճելի է, որ այս փաստաթուղթը նախորդների համեմատ ավելի որակյալ և առավել համապարփակ էր: Սակայն նրա իրագործման ընթացքը ցույց է տալիս, որ հատկապես՝ ինստիտուցիոնալ արդիականացման և պետական կառավարման համակարգի մասերով այն դատապարտված է մնալու թղթի վրա:

#### գ) Չևախեղված պետական մեքենան ձևախեղել է հասարակությունն ու տնտեսակարգը

Ներկա աղաղակող թերությունների և որակապես լուրջ ձեռքբերումներ չունենալու գլխավոր պատճառը Հայաստանի հնացած և անարդյունավետ **պետական մեքենան** է և նրանից սնունդ առած ու ծավալված հասարակության բոլոր շերտերը, այդ թվում՝ նաև պետական մարմիններն ու կուսակցությունները թափանցած **համատարած կոռուպցիան ու մոլեռանդ շահամոլությունը**: Սակայն վերջիններս հետևանքներ են, քանզի պատճառը պետական մեքենան է: Սա միայն Հայաստանի երրորդ Հանրապետությանը բնորոշ նոր երևույթ չէ: Այն գոյություն ուներ նաև առաջին հանրապետության և խորհրդային տարիներին, վերջիններիս դեպքում հիմնականում՝ սովորական կաշառակերության տեսքով: Բայց այն ժամանակ խոսք չէր կարող լինել հասարակության մոլեռանդ շահամոլության մասին: Այժմ այս երևույթն իր տարածվածության և հանրային կյանքում առանցքային դերակատարություն ձեռք բերելու արդյունքում այլևս ո՛չ կաշառակերություն է և ո՛չ էլ նույնիսկ՝ պարզունակ կոռուպցիա: Արատավոր և անարդար պետական մեքենան իր կերպարով ձևավորել է իր խիղճը, մարդկային նկարագիրն ու սրբությունները դրամի վերածած **մոլեռանդ-շահամոլական**

15 St u The Global Competitiveness Index 2009-2010.

**հասարակություն:** Ընդհանուր առմամբ՝ հասարակության և առավելաբար՝ պետական ապարատի վրա իշխող գիտակցությունը, ֆեոդիզմ ու գերնպատակը **անձնական շահն է՝** առանց միջոցների խտրության, մարդկային ամենապարզից մինչև ամենավեհ արժեքներն անտեսելու, մոռանալու և ոչնչացնելու ճանապարհով փող դիզելը: **Հիմնավոր չէ մասնավոր սեփականատիրական հասարակարգը հայտարարել հասարակության այսպիսի ձևախեղման պատճառ:** Մասնավոր սեփականությանը շուկայական հասարակարգն, անշուշտ, նման վտանգ պարունակում է, բայց դա նրա ատրիբուտը չէ: Այս միտքը փաստելու համար կարելի է բերել շատ երկրների օրինակներ, ուր մասնավոր սեփականությունը ներդաշնակորեն գոյակցում է հոգևոր ու համամարդկային արժեքների հետ: **Թող Հայաստանի պաշտոնյաներն ու նրանց ուղղորդող օլիգարխիան իրենց ծնած արատներն անտեղի չվերագրեն մասնավոր սեփականությանն ու ազատականությանը: Նման արատներն օբյեկտիվ անխուսափելիություն չեն:**

Մրցակցության խնդիրը Հայաստանում այնքան է արծարծվել, որ հոգեցերել է բոլորին: Պատճառն այն է, որ **մեր երկրում ներկայումս մրցակցությունը բոլոր հարթություններում է վերացված կամ գտնվում է այդպիսի սպառնալիքի տակ տնտեսական, քաղաքական, այդ թվում՝ միջկուսակցական և ներկուսակցական, մշակութային, կադրային և այլն:** Բայց միևնույն է, Հայաստանի պետական մեքենան չի ցանկանում լուծումներ գտնել և չունի այդպիսիք, այլ սոսկ ժամանակ է ձգում...

**Ապրանքների ներմուծման** մեջ մրցակցությունը պարզապես արմատախիլ է արված: Շատ թե քիչ զգալի սպառման ծավալ ունեցող ապրանքատեսակի ներմուծումներով զբաղվելու իրավունք գործնականում ստանում է միայն պետական մեքենայի հետ սերտաճած խումբը, և ներմուծումը պարզապես մենաշնորհների է վերածվել: Այստեղ համատարած կերպով գործում է գնագոյացման և սեփական բիզնեսը սպառողների վզին փաթաթելու՝ նույն մեխանիզմը: **Շարքային քաղաքացին իր երկրում ներմուծման իրավունքից գործնականում զրկված է:** Դրանով խոշոր կապիտալը (առանձին բացառություններով հանդերձ) իր գործելակերպն է դարձրել մենաշնորհային բիզնեսների կառավարման անկարողության հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերը ապրանքների ու ծառայությունների վրա դրվող արհեստականորեն բարձր գներով փոխհատուցելը: **Ավելին, խոշոր և հատկապես՝ մենաշնորհային դիրքեր զավթած բիզնեսը բնորոշվում է անզուսպ ազահությամբ:** Օգտվելով իրենից կախված պետական մեքենայի՝ մի դեպքում ամենաթողությունից, մեկ այլ դեպքում՝ անկարողությունից, բայց երկու դեպքում էլ՝ անկախության կորստից, իր իռացիոնալ ծախսերով աչքի ընկնող և լիովին անմրցունակ բիզնեսը այդ ամենը փոխհատուցում է անտրամաբանական գների միջոցով: Այսինքն՝ միայն ու միայն ապրանքներից ու ծառայություններից օգտվող բնակչության լայն զանգվածների **դաժան շահագործման** ճանապարհով է նա վերածվում բարձր շահութաբերի: Ուստի՝ **Grant Thornton International-ի** կողմից 2010 թ. տեղեկատվության հիման վրա կատարված հետազոտությունների արդյունքներով «Ընկերությունների սոցիալական պատասխանատվությունների» սանդղակում Հայաստանի ընկերությունները ուսումնասիրված 38 երկրների թվում զբաղեցնում են 35-րդ դիրքը, այսինքն՝ նրանք, **եզակի բացառություններով հանդերձ, «նստած են»**

հասարակության և սեփական աշխատակիցների վզին<sup>16</sup>: Ուստի պատահական չէ, որ անցած 20 տարիներին, ընդհանուր առմամբ, Հայաստանի խոշոր բիզնեսի հիմնական ռազմավարությունը հանդիսացել է ոչ թե կառավարման հմտությունների, տեխնոլոգիաների և արտադրատեսակների նորամուծությունների ապահովումը, այլ գների առաջանցիկ բարձրացումն ու նորանոր պետական ակտիվների էժան ձեռքբերումը, մանր բիզնեսի հանդեպ պարտքերի կուտակումը: 2002-2008 թթ. տվյալներով՝ Հայաստանի ներմուծումների ընդհանուր ծավալի մեջ բարձր տեխնոլոգիաներով պատրաստված ապրանքների ներմուծման բաժինը կազմել է 5-8 %<sup>17</sup>: Եթե չհաշվենք համակարգիչների և հեռահաղորդակցման պարագաների ավանդական ապրանքատեսակները, ապա բարձր տեխնոլոգիական մեքենասարքավորումների տեսակարար կշիռը կմնա մոտ 0,15%: Ահա մեր բիզնեսի զարգացման որակը, մինչդեռ, օրինակ, անկախացած Էստոնիայում մասնավոր կապիտալը ստեղծեց օնլայն կապի Skype համակարգը, որը վաճառվեց Microsoft-ին 8,5 մլրդ. դոլարով: Հայաստանում գրեթե բոլորը ճանաչում են իրար, ուստի փորձեք պարզել՝ ովքե՞ր են այն գործարարները, որոնք իրենց գործը հիմնել են նոր ստեղծվող արտադրանքի, նորացված տեխնոլոգիաների ու նոր մտքի վրա:

Հայաստանում այսօր ակնհայտ են **ավիափոխադրումների, վառելիքի, հացահատիկի և ալյուրի, շաքարի**, իսկ վերջերս նաև՝ **մսի, կաթնամթերքի** ու նույնիսկ **մրգերի** արհեստական բարձր գները: Բնակչության կեսից ավելիի աղքատության պայմաններում, տնտեսական ճգնաժամի հանդեպ ժողովրդին անպաշտպան թողած պետական մեքենան ներկայացնող անձինք պետք է ընտրություն կատարեն պատվախանդության և այլ շահերի միջև: Մինչդեռ, 2011 թ. փետրվար-մարտի համեմատ միջազգային շուկայում ցորենի գինը 23 %-ով նվազելուց հետո, մեկուկես ամսից ավելի ժամանակամիջոցում Հայաստանում ալյուրի ներքին մեծածախ գինը նվազել է ընդամենը 4 %-ով: Գնի նվազեցման այս նմանակումը կա՛մ պետական մեքենայի ուղղորդմամբ, կա՛մ էլ ժողովրդի նկատմամբ նրա բացարձակ անտարբերությամբ կարող է տեղի ունենալ: Այսինքն՝ **պետական մեքենայի պարտադրանքով ժողովուրդը բարձր գների միջոցով հարկատու է դարձել ոչ միայն պետական բյուջեին, այլև շուկաներն ու ժայռի մեքողներով զավթած կաստային**: Հիշենք 2011 թ. տարեմուտի նախօրյակին հավկիթի արհեստական պակասուրդի ստեղծումն ու գնի ցատկը: Մինչ այդ պետական պատասխանատուները խրոխտ կերպով հայտարարում էին, թե իրենք թույլ չեն տա գների նման թռիչքներ: Պանրի գների արհեստական թանկացումն ու միաժամանակ որակի անկումը հանգեցրին ներքին շուկայում տեղական արտադրանքի իրացման 20 % կրճատման և օտարերկրյա պանրի ներմուծման 50 %-ով ավելացման: Այսինքն՝ տեղական բիզնեսը իր ազահությամբ ու անհեռատեսությամբ կարող է նույնիսկ կտրել այն ճյուղը, որի վրա ինքն էլ է նստած: Այս ամենը նույնպես անմիջականորեն կապված է պետական մեքենայի անլիարժեքության և վատ կառավարման հետ: **Այսպիսով՝ մեր բիզնես-ընկերակցությունը ընդհանուր առմամբ ստեղծող կամ ստեղծագործ կապիտալը չէ, այլ անարտադրողական և վատնող կապիտալ**: Ներկա որակի կապիտալով ու

16 Տե՛ս <http://rating.rbc.ru/article.shtml?2011/06/09/33318359>.

17 Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009., Նորարարության էկոհամակարգի սերմանումը, էջ 64:

«գործարարությամբ», իհարկե, մենք շուկաներ կամ բարձունքներ նվաճելու շանսեր չունենք: Այս որակներով մենք արդեն հիմնականում հասել ենք այն նշածառովին, որից այն կողմ շարունակելը տխուր ավարտ է խոստանում:

դ) Պետական մեքենան և մեծահարուստները օտար են ժողովրդին

**Հայաստանի իշխանություններն արդեն 20 տարի իրենց առաջնային խնդիրը համարում են ոչ թե երկրի և ժողովրդի անվտանգության ու բարեկեցության ապահովումը, այլ հիմնականում՝ ստեղծագործ ներուժ չունեցող, երկրի միջոցները կլանող ու փոշիացնող օլիգարխիկ խմբերի, նրանց սպասարկողների ու վերջիններիս հետ սերտաճած պաշտոնեության շահերի պաշտպանությունը:**

Հայաստանում անցած 20 տարիներին իշխանության գալու գործընթացը չի ընթացել քաղաքական պայքարի և քաղաքական-ծրագրային մրցակցության միջոցով՝ ժողովրդի քվեն ստանալու ճանապարհով: Ի սկզբանե ու մինչև օրս էլ կիրառվել ու կիրառվում են պայքարի բոլորովին այլ մեթոդներ ու միջոցներ, ուստի կուսակցությունների բացարձակ մեծամասնության նախընտրական ծրագրերն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում դրանց ձևական, վերացական բնույթն ու պարզ-գովազդային նշանակությունը: Իսկ այդ ամենը ուղղակիորեն դեֆորմացնում է նաև պետական մեքենան: **Հայաստանի անկախացման ժամանակահատվածում իշխանությունները չեն կարևորել ժողովրդի դերակատարությունն ու առաջին հերթին՝ նրա հետ երկխոսելու և միասնական անհրաժեշտությունն ու ներուժը:** Անկախացման առաջին մեկ-երկու տարում իշխանություններն ընկան էյֆորիայի մեջ, վատնեցին ժողովրդի վստահության հսկայական պաշարները, իսկ **պետական մեքենան տարեցտարի ավելի ու ավելի օտարվեց ժողովրդից:** Մինչդեռ, պետական մեքենան չի կարող արդյունավետ գործել, եթե չի հենվում ժողովրդի առնվազն երկու երրորդից ավելի մեծամասնության աջակցության վրա: Հայաստանում՝ 1992 թվականից ի վեր<sup>18</sup>, ժողովրդին ավելի ու ավելի նվազ դեր է հատկացվել իշխանությունների կազմավորման և դրանց գործունեության վրա ներազդելու մեջ:

Հասարակության և պետական մեքենայի միջև խզվածության հատկանիշներից և միաժամանակ՝ այն պայմանավորող գործոններից մեկը պետական մեքենայի կողմից հասարակությանն անբավարար տեղեկատվություն տրամադրելն է և դրա մեխանիզմների անհուսալիությունը: Անաչառությունը պահանջում է արձանագրել, որ այս առումով մոտ մեկ տասնամյակ առաջ իրավիճակը ոչ մի քննադատության չէր դիմանում, բայց հատկապես վերջին տարիներին տվյալ ասպարեզում որոշակի առաջընթաց կա: Սակայն, ընդհանուր առմամբ, պետական մեքենայի աշխատանքների թափանցիկության ու տեղեկատվության ապահովման իրավիճակը դեռևս մնում է խիստ անբավարար՝ ինչպես հանրության վստահությունն ապահովելու, այնպես էլ քաղաքացիական հասարակության նախաձեռնողականության համար տեղեկատվություն մատակարարելու առումով: Պետական մարմինների էլեկտրոնային կայք-էջերում տեղադրվող տեղեկատվության ձևակազմերը, պարբերական տեղեկատվության քարմացման վիճակը և այդ կայքերի նկատմամբ զուտ ձևական մոտեցումը

<sup>18</sup> Նկատի ունենք 1991 թվականին կայացած ազատ ընտրություններին հաջորդած ողջ ժամանակահատվածը:

ասվածի ապացույցն են:

Հասարակության օտարվածությունը պետական մեքենայից դրսևորվում է նաև պետականաշինության և ազգային անվտանգության հիմքերին առնչվող օրենքների ընդունման ու փոփոխման հարցերում: Հանրությունը չի կարևորում այդ օրենքները, քանի որ դրանք հիմք չեն պետական մարմինների աշխատանքներում, նրանց հետ հարաբերություններում: Որքան էլ մեզանում ժողովրդավարության և ազատականության նմանակումների փորձեր են եղել, մեր հասարակությունը լավ էլ պատկերացնում է, որ գնալով իշխանություններն ավելի ու ավելի են հոգ տարել սեփական պատժիչ գործառույթների ամրապնդման և ոչ թե հասարակությանը ծառայություններ մատուցելու մասին: Մրանով **իշխանություններն ու մեծահարուստների փոքրաթիվ խումբը ավելի են կտրվել ժողովրդից և իրենց շահերով ու գործողություններով երկրի ու ժողովրդի ընդհանրական շահերի հետ անհաշտելի հակադրության իրական վտանգի մեջ են հայտնվել:** Սա քիչ երևացող, սակայն դանդաղ գործողության ական է ազգային անվտանգության համար, որի պայթյունի նախապատրաստման մեջ, ի լրումն թուրքական երկու պետությունների, արտաքին ավելի լուրջ շահագրգիռ դերակատարներ կան: Ու կարծես թե հասարակության մեծամասնության և օլիգարխների փոքրամասնության միջև հակադրության հետագա խորացումը կանխարգելելուն ուղղված իրական ջանքերի առումով իշխանությունների զգոնությունն ամենևին էլ համարժեք չէ: Ավելի խորը վերլուծության դեպքում ակնհայտ է դառնում, որ ամբողջը կորցնելու սպառնալիքն իրական է նաև օլիգարխների համար: Սթափ մտածելու և կառուցողաբար գործելու ճանապարհով ներազգային համերաշխության հասնելու համար նրանք անհամեմատ ավելի իրական և լուրջ հիմքեր ու շահեր ունեն:

Ժողովրդի օտարումն իշխանություններից և մեկուսացումը պետական մեքենայից այսօր Հայաստանում այն աստիճանի են հասել, որ հասարակությունն անտեսված ու անտարբեր է դարձել նաև հանրային ունեցվածքի ճակատագրի հանդեպ: Վկայաբերենք նրա անտարբերությունը Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի ակտիվներն անվճար այլոց հանձնելու արհեստական գործարքի հանդեպ: Կարելի է վերհիշել նաև տարիներ շարունակ ընթացող «Նաիրիտի» բազմաքայլ սնանկացումը: Քանի որ այն ընթացքի մեջ է և դեռևս կարելի է հետ կանգնել ավելի կորստաբեր քայլերից, կարծում ենք, առնվազն լուրջ չէ 400-500 մլն. դոլար ծավալի գործարքների համար մրցույթ հայտարարելը՝ հավանական մասնակիցներին տրամադրելով 15, իսկ հետո՝ 30- օրյա ժամկետ: Նոր ներդրողի ներգրավման գործարքները խոշոր ֆիրմաների հետ թե՛ Հայաստանի, թե՛ միջազգային պրակտիկայում անցնում է ամիսների նախապատրաստական փուլ: Օրինաչափորեն, այդ ընթացքում անկախ միջազգային մասնագիտացված կազմակերպությունները պետք է իրականացնեն տեխնիկական և ֆինանսական աուդիտ, պետք է մշակվեն և հաստատվեն մրցույթի մանրամասն պայմանները: Դրանից հետո մրցույթի հանդեպ հետաքրքրությունների բյուրեղացումը և բուն մրցութային հայտերի ներկայացումը նույնպես պահանջում են ամիսներ: Եվ այդքան տարիներից հետո ինչու՞ է այսօր նման հապճեպություն դրսևորում մեր ավարկոտ պետական մեքենան:

Պաշտոնյաների կողմից պատասխանատվությունը միմյանց վրա գցելու՝ արքություն աստիճանի հասնող օրինակ է էկոնոմիկայի նախարարի

հայտարարություն-խոստովանությունը «Նաիրիտի» հետ կապված մրցույթի ընթացքի վերաբերյալ<sup>19</sup>: Մեկնաբանությունը հետևյալն է՝ «Նաիրիտը» իրենց ենթակայության տակ չէ, մինչդեռ այն էներգետիկայի նախարարության ենթակայության տակ էլ չէ, քանի որ բաժնետոմսերի միայն 10 %-ն է պետական կառույցների ձեռքերում: Իսկ որ «Նաիրիտը» երկրի ամենախոշոր և համակարգաստեղծ արտադրական ձեռնարկությունն է, դա էկոնոմիկայի նախարարությանը չի<sup>20</sup> վերաբերում: Այդ դեպքում ի՞նչ հիմքով է էկոնոմիկայի նախարարը աշխատելու նմանակումով զբաղվում՝ օրնիբուն այցելելով ու մեկնաբանելով մասնավոր ձեռնարկատերերի կողմից հիմնվող կամ ընդլայնվող մասնաշենքերի բացումները: Դրանք ենթակա<sup>21</sup> են էկոնոմիկայի նախարարին:

Հայաստանի պետական մեքենայի անլիարժեքության և հասարակությունից նրա օտարվածության մեկ այլ դրսևորում է միջին խավի ձևավորման գործում նրա անարդյունավետ աշխատանքն ու շարունակական ձախողումները: Վերջին տարիներին այս ասպարեզում նույնիսկ հետընթաց է նկատվում: Խոշոր բիզնեսն ազահորեն, բոլոր հնարավոր մեթոդներով, նվաճում է նորանոր ոլորտներ՝ մանրածախ առևտրից մինչև այս կամ այն ապրանքի ներմուծումը, շինարարությունը, տրանսպորտը և այդպես շարունակ:

ե) Պետական մեքենան ճահճացել է և ընդունակ չէ արդյունավետ գործելու

Պետական մեքենայի թերզարգացածության, նրա զանազան արատների վերաբերյալ բավականին բացորոշ և կոնկրետ գնահատականներ են պարունակում Հայաստանի նախագահի հատկապես վերջին մեկ տարվա հրապարակային ելույթները: Դրանցում առկա են նաև այդ մեքենայի առանձին օղակների փոխակերպման կոնկրետ պահանջներ: Պետական մեքենայի թուլության ու անկատարության մասին վկայող անմիջական կամ անուղղակի բազմաթիվ փաստարկումներ առկա են նաև գործող կամ պաշտոնաթող բարձրաստիճան այլ պաշտոնյաների ելույթներում: Այսպես՝ վերջերս ԱԺ նախկին խոսնակ Տիգրան Թորոսյանը հեռուստատեսությամբ հայտարարեց, որ իշխանությունները չունեն անհրաժեշտ կամք և գիտելիքներ ինքնուրույն նախաձեռնություններ մշակելու համար: Պետական մեքենայի լուրջ բացերն ու թերացումներն այնքան տարածված ու ընդգրկուն են, որ դրանք բախվում ենք ամեն քայլափոխի՝ պարզագույն կենցաղային մակարդակներից մինչև բարդագույն համակարգային խնդիրների լուծման կամ արտաքին քաղաքականության ոլորտները: Նույնիսկ մասնագիտական կարողություններ անհրաժեշտ չեն, որպեսզի անաչառ մարդը տեսնի ու հասկանա, որ պետական կառավարման առկա որակով մենք հեռու չենք գնա, որ այս կերպ մեր պետական նավը բախվելու է ակնհայտ խութերին՝ իր հետ խորտակելով բոլորին: **Միջազգային ամենախճողված ու նրբագույն իրադարձությունների հորձանուտում հայտնված մեր երկրի** պետական պաշտոնյաները մինչև օրս այնքան չեն հասունացել, որպեսզի գիտակցեն, որ հատկապես պաշտոնական մակարդակում ոչ միայն զրազետ չէ, այլև անթույլատրելի է իրենց կողմից «Հայաստան և Արցախ» կամ՝

19 Տե՛ս «Իրատես դե ֆակտո» օրաթերթ, եր., 15.07. 2011:

«Հայաստան և ԼՂՀ» բառակապակցությունների օգտագործումը: Ի՞նչ է, Արցախն ու ԼՂՀ-ն Հայաստան չե՞ն: Դժվա՞ր է հասկանալ, որ պետք է օգտագործել «ՀՀ և Արցախ (կամ ԼՂՀ)» բառակապակցությունը: Մինչդեռ, նման սխալները «դակվում են», և՛ հայի, և՛ օտարի ուղեղներում, և դրանցով նաև ջուր է լցվում թշնամական քարոզչության ջրաղացին: «Հայաստան և Ղարաբաղ» ասելիս նույնիսկ հայ մարդու (հատկապես գրագիտության հետ խնդիրներ ունեցողների) ենթագիտակցության մեջ է մտնում, որ դրանք ոչ միայն առանձին պետություններ են, այլև առանձին երկրներ: Իսկ ահա որոշ խառնակիչներ մեր ներսում փորձում են գրեթե էթնիկական և այլ որակական տարբերություններ ու հակադրություններ «հայտնագործել»: Կամ որևէ պաշտոնյա կարո՞ղ է մեկնաբանել, թե ինչու՞ է մինչև այժմ մեր երկրորդ պետությունն անվանվում ԼՂՀ և ոչ, օրինակ, Լեռնային Արցախի Հայկական Հանրապետություն: Դրանով ոչ միայն կվերականգնվի երկրամասի հայկական անվանումը, այլև տարբեր միջազգային ատյաններում և հաղորդագրություններում մշտապես կլսեն ու կընկալեն, որ խոսքը հայկական պատմական երկրամասի մասին է և ոչ թե ոչ հայկական անվանման՝ Ղարաբաղի: Նույնիսկ դարեր առաջ, երբ օտարները հայերից զավթել են Արցախը, նրանք հասկացել են անմիջապես այն անվանափոխելու կարևորությունը: Մենք ազատագրել ենք ու թողել նվաճողի կողմից տրված **սև** անվանումը:

Չպետք է մոռանալ նաև Հայաստանի պետական այրերի կողմից երբեմն «ազատագրված տարածքների» փոխարեն «գրավված տարածքներ» արտահայտության օգտագործման մասին: Այդ հարցում, մեղմ ասած, զարմանք է հարուցում ՀՀ առաջին նախագահի 2011 թ. հունիսին ռուսաստանյան «Московские новости» թերթին տված հարցազրույցում պետական այրից պահանջվող իմաստնության պակասը: Նա միջազգային լսարանի մոտ կասկածի տակ է դրել տարածքների ազատագրման իրողությունը, հայտարարելով. «Մադրիդյան սկզբունքների տեսքով. օկուպացված կամ, մեր տերմինաբանությամբ՝ ազատագրված տարածքների վերադարձ...»<sup>20</sup>: Եվ ընդհանրապես՝ երկրի նախկին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի այդ հարցազրույցի հիմնական միտքն այն էր, որ այժմ մեր դիրքերը շատ ավելի թույլ են, որ Ադրբեջանն ունի բոլոր հնարավորությունները կոշտ դիրքերից հանդես գալու համար: Ի՞նչ է սա, խորհուրդ ադրբեջանցիներին, թե՞ մեսիջ միջազգային լսարանին: Ընդ որում, երկու օր անց, արդեն «Եվրոնյուսին» տված իր հարցազրույցի ընթացքում նույն «փաստարկները» բառացիորեն կրկնեց Իլիամ Ալիևը:

Պետական պաշտոնական տեսակետն Արցախի հարցում պետք է լինի հստակորեն ամրագրված: Պետք է նաև օրենսդրության մեջ սահմանվեն հստակ պատժամիջոցներ՝ գործող պետական պաշտոնյաների, նախկին նախագահների, վարչապետների, արտգործնախարարների, նրանց տեղակալների և մյուս նախկին պատասխանատուների կողմից ազատագրված Արցախի վերաբերյալ «հայերի կամ Հայաստանի կողմից գրավված» եզրույթը, «Հայաստան և Արցախ» կամ՝ «Հայաստան և ԼՂՀ» արտահայտությունները կիրառելու համար:

Հայաստանի հաջորդական իշխանությունները, մեկը մյուսին փոխարինելով, հասունություն չցուցաբերեցին և ի վիճակի չեղան 20 տարիների ընթացքում ոչ միայն բարդագույն համակարգեր, այլ գոնե պետականության ավարտուն խորհրդանիշեր ստեղծել: Նույն ժամանակամիջոցում Հայաստանի պետական

20 «Կապիտալ» օրաթերթ, Եր., 24 հունիս, 2011թ., N 118:

մեքենան ի գորու չգտնվեց մշակել իր գործունեությունը կազմակերպելու հուսալի մեխանիզմներ և ծրագրեր, այդ գործունեությունը և որոշումները կայացնելու հիմքը դարձնել ոչ թե ժողովրդի լեզվով ասած՝ «**ծովը ծնկներից է քվում**» եղանակով ձևավորվող սիրողական պատկերացումները, այլ միմյանց փոխլրացնող ու հավասարակշռող պրոֆեսիոնալ կառույցների ու փորձագետների համակողմանի վերլուծություններն ու քննարկումները: Լուրջ չի կարելի ընդունել այն պետական մեքենային, որը հայտարարում է, թե 20 տարիների մեջ առաջին անգամ տրանսպորտի և կապի ոլորտում հաստատվել են ռազմավարական գերակա ուղղություններ: Իսկ այդ տարիներին ինչո՞վ է զբաղվել տվյալ նախարարությունը, ինչպե՞ս են վարչապետներն ու նախագահները հաշվետվություններ ընդունել այդ ոլորտից: Պետական կառավարման բարձր, միջին և ցածր օղակների մեր պաշտոնյաները, որպես կանոն, պրոֆեսիոնալիզմից ու երկրի հանդեպ պարտքի գիտակցումից հեռու մարդիկ են: Այդ պայմաններում **բուրգի վերևում որոշումներ կայացնող իշխանավորները մի կողմից՝ չեն սնուցվում նոր, համարձակ գաղափարներով ու ծրագրերով, մյուս կողմից՝ զգալով ապարատի գորշությունն ու թերաբեքությունը, իրենք էլ չեն համարձակվում առավել բարձր նպատակներ ստանձնել:**

Մեզանում ձախողված նախարարների բնորոշ կերպարներ հանրային հիշողության մեջ որքան ուզեք կան: Եթե անձնական և պրոֆեսիոնալ նման հատկանիշներով բնորոշվող անձնավորությունները հայտնվում են պետական հիերարխիայի բարձր աստիճանում, դա վատ վկայությունն է այն բանի, որ պետական մեքենան դեռ հասուն չէ, չունի բավարար կանխարգելիչ մեխանիզմներ: Նախկինում մենք ընկել էինք մի ծայրահեղության մեջ, երբ տարին մեկ կամ երբեմն էլ երկու անգամ վարչապետներ ու նախարարներ էին փոխվում, իսկ այժմ այլ ծայրահեղության մեջ ենք: Կան նախարարներ, որոնք արդեն պաշտոնավարում են 7-10 տարի: Դա ինքնին վատ չէ: Սակայն բացակայում է նրանց աշխատանքի արդյունավետության գնահատման կանոնակարգված և հուսալի գործիքակազմը: Փորձենք հիշել երկարակյացներից զոնե մեկին, որը չի ճահճացել և ոչ թե տաս, այլ զոնե մեկ-երկու կարևոր խնդիր է լուծել երկրի համար: Մինչդեռ, երկարակյացները պետք է հեռանկարային քաղաքականության և ինստիտուցիոնալ զարգացման հարցերում (ինչը յուրաքանչյուր նախարարի աշխատանքի արդյունավետության գնահատման առաջնային չափանիշն է) արդեն հրաշքներ գործեին: Իրողությունները, սակայն, դրա մասին չեն վկայում: Ավելին՝ փնտրելու դեպքում անգամ մի քանի արդյունավետ երկարակյաց փոխնախարարներ կգտնենք, իսկ նախարարներ՝ ոչ: Վերջինները գոյատևում են առաջին հերթին հնազանդորեն ծառայելու և նախաձեռնություն չդրսևորելու շնորհիվ:

Անցած 20 տարիներին մեր պետական մեքենային բնորոշ էր որոշումների կայացման ու գործունեության «**փորձելու և սխալվելու**» մեթոդով առաջ շարժվելը: Այդպիսի գործելաոճի նախադրյալը երկրի պետական համակարգի կադրերի բավարար պրոֆեսիոնալ կարողությունների բացակայությունն է, ինչը միանգամայն նպաստավոր պայմաններ է ստեղծում պետական ապարատը ինքնուրույն մտածողությունից, վերլուծական և ստեղծագործ կարողությունից զուրկ, կամակատար «կադրերով» լցնելու համար: Նման «մեքենայում» նրանք իրենց շատ հարմարավետ են զգում: Այդ մեթոդի կիրառման մասին է վկայում



տարիներ շարունակ դրամի փոխարժեքի արհեստական արժևորման քաղաքականությունը, որին հաջորդեց 2009 թ. մեկ օրում նրա մոտ 25% գահավիժումը, պետության ոսկու պաշարների վաճառքի անհաջող գործարքը, արդեն յոթ տարի ձգվող «Նաիրիտի» ակտիվների բազմակի վաճառքների «պարզամիտ» փորձերը, Ռուսաստանից 500 մլն. դոլար բարձր տոկոսադրույքով վարկի ձեռքբերումը, որի միջոցների զգալի մասն առայսօր չի օգտագործված և այլն, և այլն:

«Փորձելու և սխալվելու» մեթոդով շարժվելու ակնառու օրինակ է ՀՀ Կառավարության ու Կենտրոնական բանկի կողմից միջազգային տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցության հնարավորությունն ընդհանրապես գնահատել չկարողանալու իրողությունը: Մեր պաշտոնյաների՝ 2008 թ. տարեվերջին հնչեցրած այն հայտարարությունը, թե Հայաստանը թույլ է ինտեգրված միջազգային տնտեսությանը և հետևաբար՝ ֆինանսական ճգնաժամը շրջանցելու է մեր երկիրը, սեփական անգործությունը քողարկելու փորձի ակնհայտ վկայությունը դարձավ: Խոսքն, իհարկե, այն մասին չէ, որ կարող էինք ակնկալել ճգնաժամի հնարավոր բացասական ազդեցության՝ տոկոսների ճշտությամբ գնահատականը: Հարցն այն է, որ անհիմն համառությամբ բացասական ազդեցության հնարավորությունը մերժվում էր ընդհանրապես և նույնիսկ մեզ հույս էր ներշնչվում ճգնաժամից օգուտներ քաղելու վերաբերյալ՝ հաշվի չառնելով, որ Հայաստանի պետական մեքենան մման որակների չի տիրապետում: Պետական մեքենան պետք է ի վիճակի լիներ գնահատել բացասական ազդեցությունների հնարավոր ուղղություններն ու ձևերը, նկատի ունենալ մի քանի սցենարներ և նախապես պարզել ճգնաժամի ներգործությունը մեղմելու միջոցառումների ու ռեսուրսների իրատեսականությունն ու արդյունավետությունը: Մինչդեռ, նույնիսկ ոչ մասնագետի համար էր ակնհայտ, որ եթե 2008 թ. ԱՄՆ-ում երկրորդ տարին անընդմեջ անշարժ գույքի շուկայից սկսված ֆինանսական ճգնաժամը տեղափոխվել է զարգացած երկրներ ու միջազգային շուկաներ, ապա բնականաբար, այն չէր կարող չազդել արտաքին ֆինանսական աղբյուրներից խիստ կախված որևէ երկրի անշարժ գույքի գնագոյացման, շինարարության մեջ կատարվող ներդրումների և շուկայի ծավալների վրա:

**Իսկ ահա քաղաքական ոլորտում** «փորձելու և սխալվելու» մեթոդով գործելաճի բնորոշ օրինակ է ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի հայտարարությունը. «Երբ մենք փորձեցինք մեզ համար բացահայտել այսօրվա Թուրքիան, գտանք 100 տարի առաջվա Թուրքիան»<sup>21</sup>: Այստեղ խոսքը հայ-թուրքական «երկխոսության» նախաձեռնման փորձի տված դրական կամ բացասական հետևանքների մասին չէ, այլ Հայաստանի պետական մեքենայի կողմից (որի բարձրագույն պաշտոնյաներից է ԱԺ փոխխոսնակը) դրան նախապատրաստվածության: Նախ, պետք է արձանագրել, որ կրկին սխալ է բացահայտվել Թուրքիան: Այսօրվա Թուրքիան ամենևին էլ 100 տարի առաջվանը չէ: Շատ բաներ են ժառանգվել, սակայն շատ են նաև փոփոխությունները: Եվ հետո, ստացվում է, որ Հայաստանի Ազգային ժողովում այդ երկրի հետ կապված արձանագրությունների հարցը քննարկելիս մեր բարձրաստիճան պաշտոնյաները դիրքորոշվել են լավ չտիրապետելով խնդրին: Ի՞նչ է, այսօրվա Թուրքիան այդքան հեռվում էր, նրա էությունն ու նրանում ընթացող գործընթացները նախապես ուսումնասիրելու և գնահատելու համար տեղեկատվության

21 «Իրատես de facto» օրաթերթ, եր., 30.07.2010 թ.:

պակա՞ս կար, անցած 20 տարիները բավարար չէի՞ն, և միայն հիմա՞ պարզ դարձավ մեր հարևանի էությունը: Իսկ գուցե վերլուծություններն ու փորձագետների կարծիքը լսելու և կարևորելու գործելաոճը պետք է օրենսդրորեն ամրագրված լինի մեր պետական մեքենայի գործունեության կանոնակարգերում: Չէ՞ որ մենք ունենք Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության և Պատմության ինստիտուտներ, Ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, անհատ փորձագետներ և վերջապես՝ ազգային անվտանգության ռազմավարություն, որի մեջ կոնկրետ դիրքորոշումներ կան նաև Թուրքիայի հետ կապված: Եթե արտաքին անվտանգության առումով մնան ռազմավարության ընդունմանը չի նախորդել առաջին հերթին Թուրքիայի էության, նրա արտաքին ու ներքին նկրտումների, ուժեղ և թույլ կողմերի վերլուծությունը, ապա ստացվում է, որ գոնե այդ մասով որակագուրկ է հիշյալ առանցքային պետական փաստաթուղթը:

զ) Պետական կառավարման համակարգի անավարտությունն ու անարդարությունը

Մինչև վերջին տարիները մեր պետական այրերի ականջներում նույնիսկ չէր հնչել այն գաղափարը, որ պետական մարմիններն ու պաշտոնյաները հասարակությանը ծառայություններ մատուցողներ են: Այժմ նրանք վերջապես լսել են այդ մասին, սակայն իրենց ուղեղներում և հատկապես հոգիներում տվյալ գաղափարը շատ դժվար է տեղավորվում: Ուստի մնան պարտականությունը մեր շարքային քաղաքացու կողմից ընկալվում է որպես հերթական ականջ շոյող հայտարարություն: Որպես ապացույց կարելի է վկայաբերել այն փաստը, որ արդարադատության նախարարի հայտարարությունը կառավարության աշխատանքը էլեկտրոնային կառավարման համակարգի փոխադրելու մասին հենց նույն նախարարությունում էլ մնացել է «օդի մեջ»: Մինչդեռ, դա սոսկ հայտարարություն չէ, այլ կոնկրետ խոստում: Ճիշտ է, կառավարության աշխատակազմի կայք-էջն այս առումով շահեկանորեն տարբերվում է մյուս մարմիններից, հատկապես հանրության հետ կապի ծրագրային լավ լուծումներով: Բայց աշխարհում առկա առցանց էլեկտրոնային կառավարման հինգ աստիճան համակարգի փոխարեն Հայաստանում հայտարարված երկաստիճան համակարգն անգամ մեծապես կաղում է: Իսկ հանրությանը ծառայություններ մատուցելու՝ պետական կառույցների պարտականությունը իրական կյանքում դեռևս այդ կառույցների կողմից կամայականություններ դրսևորելու մտայնությունից դուրս չի եկել:

Հանուն արդարության պետք է նշել, որ վերջին տարիներին իշխանությունների մի շարք նախաձեռնությունները կարծես թե խոսում են հասարակությունն ու պետական մեքենան առողջացնելու անհրաժեշտության գիտակցման ու կարևորելու մասին: Դրանցից հաջողվածների թվին կարելի է դասել քաղաքացիների անձնագրերի և վիզաների գործի վերակազմակերպումը, ճանապարհային երթևեկության թեև ոչ լիարժեք, բայց որոշակի բարելավումը, փողատերերի կամ զանազան պաշտոնյաների կողմից վայրենաբար երթևեկելու երևույթի սահմանափակումը, հետիոտնի իրավունքները հարգելը, հասարակական տրանսպորտի ծառայու-

թյուններին ավելի քաղաքակիրթ բնույթ հաղորդելը, կազմակերպությունների գրանցման դյուրացումները և այլն: Սակայն հասկանալի է, որ սրանք երկրի առջև ծառայած խնդիրների ամբողջ ծավալի միայն աննշան մասնիկներն են և ոչ թե ամբողջական համակարգը: Յուրաքանչյուր քաղաքացի, ով շփվել է մեր պետական մեքենայի հետ, կարող է բերել սեփական փորձով տեսած անթիվ օրինակներ, որից հետո նրան հասկանալի չէ, որ տվյալ պետությունն իրենն է, պաշտոնյաներն իր ազգակիցներն են և այդամենն իր հայրենիքի մասն է կազմում:

Հայաստանի քաղաքացին իրեն ավելի նվաստացած է զգում, երբ վերադառնում է հարևան Վրաստանից, տեսնում է նրա պաշտոնյաների պատասխանատու վերաբերմունքը: Նույնիսկ Ռուսաստանում, որտեղ կոռուպցիան շատ ավելի տարածված երևույթ է, քաղաքացին այսչափ կողոպտված ու նվաստացած չի զգում, քանի որ այնտեղ կաշառք վերցրած պաշտոնյան պահում է իր խոստումը և խնդիրներ է լուծում, քաշքշուկներ չի ստեղծում: Հայաստանի պաշտոնյան ոչ միայն դա չի անում, այլև ամբարտավան է, քիչ կրթված, ազահ ու չարությամբ լցված:

Մեր քաղաքացիները, որպես կանոն, չեն վստահում իրավապահ մարմիններից: Ոչ միայն չեն հավատում ու հակված չեն աջակցելու նրանց աշխատանքներին, այլև աշխատում են որքան հնարավոր է հեռու մնալ: Նույնիսկ այն դեպքերում, երբ կատարվում է ավտոմեքենայի կամ բնակարանային գողություն, քաղաքացիների մի ստվար մասը հույս չի կապում իրավապահ մարմինների հետ և նրանց չի հայտնում այդ փաստերի մասին: Էլ ուր մնաց, եթե խնդիրն առնչվի պետական ունեցվածքին կամ պետականության հանդեպ ոստիճություններին: **Այսինքն՝ ըստ էության, մեզանում չի հաղթահարվել խորհրդային ժամանակների հոգեբանությունն ու տրամաբանությունը, երբ պետական մեքենան ու պետական ունեցվածքը քաղաքացու կողմից ընկալվում էին որպես օտարի և չարի մարմնացում, որից պետք է թաքցնել և որը կարելի է գողանալ:**

Լիովին աղճատվել է **Տարածքային կառավարման համակարգի** գործառնական դերը, որի առաջին խնդիրն իշխանությունները մինչ օրս տեսել են ընտրությունների ժամանակ իրենց վերարտադրման մեխանիզմների ստեղծման մեջ: Իսկ տարածքային զարգացման անհամաչափությունը մեղմելու համակարգված մեխանիզմ կամ համայնքային ինքնակառավարման իրական համակարգ այդպես էլ չի հաջողվել ստեղծել: Չեախտեղվել են նաև պետական մեքենայի բարելավմանն ուղղված **քաղաքացիական ծառայության, պետական գնումների, տնտեսական մրցակցության պաշտպանության, դատաիրավական համակարգի** ռեֆորմները և համապատասխան ինստիտուտները: Այսպես՝ Փաստաբանների պալատի մի շարք անդամների գնահատմամբ՝ առկա է «հանրության ցածր վստահությունը դատական ակտերի և ընդհանրապես դատական իշխանության նկատմամբ»<sup>22</sup>: Քիչ չեն դեպքերը, երբ ոչ միայն միջազգային դատական ատյաններն են ապօրինի ճանաչում մեր դատարանների որոշումները, այլև ՀՀ Սահմանադրական դատարանն է արձանագրում դրանց անհամատեղելիությունը սահմանադրության հետ: Նման օրինակներ կարելի է երկար թվարկել, թեև նշվածներն էլ բավարար հիմք են մեր պետական մեքենային տրված որակումների համար:

<sup>22</sup> 7or.am, 04.07.2011.

#### 4. Ի՞նչ անել

Համաշխարհային բեմահարթակում իրադարձություններն ավելի ու ավելի արագորեն են զարգանում և արմատական փոփոխություններ կրում: Այն ազգերն ու պետությունները, որոնք հանդես կրերեն բարձր կազմակերպվածություն և միաժամանակ՝ կարողություններ նոր գիտելիքի, գաղափարների ու հայտնագործությունների մեջ, նրանք էլ կլինեն առավել մրցունակ ու հեռանկարային: Պետք է միայն պատրաստ լինել և կարողանալ օգտվել պատմության ընձեռելիք հնարավորություններից: Ընդ որում, արտաքին քաղաքական զարգացումները վերջերս գնալով ավելի նպաստավոր են դառնում Հայաստանի հիմնախնդիրների լուծման համար: **Պուցե հենց նախախնամությունն է թելադրում, որ դարեր շարունակ դժվարությունների հաղթահարման մեջ թրծված և այդ ճանապարհով մարդասիրական հասկություններով ավելի օժտված ազգերը պետք է զարգացնեն իրենց մտավոր ու գործնական ունակությունները, որոնք էլ ի վերջո փորձություններով անցածներին ապագայում անանց առավելություններ կընձեռեն:** Բայց չպետք է մտածել, թե մյան բարեբախտության կարելի կլինի հասնել ձեռքերը ծալած և ուղեղներն անջատած՝ նստելով պետական աթոռին (թախտին) ու սպասելով բախտին: Այս դարում ազգային իղձերն իրագործելու՝ մեզ ընձեռված շանսերն օգտագործելու և բարգավաճ ու արժանապատիվ կյանք կառուցելու համար անհրաժեշտ է անաչառ կերպով և առանց խուճապի նայել առկա իրողություններին, հստակ գծել մեր ուղին, օրն օրվա, տարին տարվա վրա կառուցել մեր նոր պետականությունը: Մտքի, գիտելիքի ու փորձառության մեծ պաշարների գործադրում պահանջող, հարյուրավոր ենթաշերտեր պարունակող այդ բարդագույն գործում առանցքային նշանակություն ունեցող ուղղությունները հետևյալներն են.

- **Մարդասիրական, պատմական և մշակութային արժեքների վրա խարսխված, ամբողջական ազգային-պետական և սոցիալ-տնտեսական զարգացման նպատակների, հեռահար քաղաքականության, գաղափարների ու ռազմավարության ստեղծում,**

- **քաղաքացիական հասարակության բավարար զարգացածություն, դրան հանգեցնող պետական աջակցության ռազմավարության ու ծրագրերի ստեղծում և իրագործում,**

- **պետական մեքենայի հիմնովին նորացում՝ ինստիտուցիոնալ, պրոֆեսիոնալ ու տեխնիկական կարողությունների և էթիկայի առումով,**

- **տնտեսության փոխադրում նորամուծությունների հենքի վրա:**

Թվարկվածներից առաջին երկուսը թեև չափազանց կարևոր են և բոլոր զարգացումների ու բարելավումների նախապայմանն են, սակայն դրանք առանձին քննարկումների ու վերլուծությունների նյութ են: Մեր հրապարակման թեմային առավել մոտ են մյուս երկուսը, որոնք մի փոքր ավելի մանրամասնենք:

**Պետական մեքենայի հիմնովին նորացումն ու ամբողջովին նորամուծությունների վրա խարսխվելիք տնտեսության ստեղծումն այն վճռորոշ գործիքներն ու մայրուղին են, որոնք կարող են ապահովել քաղաքական, տնտեսական և ռազմական ոլորտներում արմատական ճեղքման համար պահանջվող մյուս նախադրյալներն ու գործոնները:**

ՔՆՆԱԿԿՆՈՒՄՆԵՐ  
Գ. (Թ՝) ԿՍՄԻ, ՔԻՎ 3 (35) ԽՈՒՄ-ՆԵՎՅՈՒՆՆԵՐ, 2011  
ՎԵՐ համահայկական հանդես

## 5. Պետական մեքենայի հիմնովին նորացում

Նախորդ բաժիններում քննելով Հայաստանի պետական մեքենայի անարդյունավետության մասին վկայող բազմաթիվ փաստերը, եզրակացրինք, որ ինստիտուցիոնալ առումով ու գործելաճով, ըստ էության, մեզանում դեռևս գործում է նախկին վարչահրամայական մեքենան՝ որոշակի կոսմետիկ ձևափոխումներով հանդերձ: Միաժամանակ, վարչական-պլանային համակարգից հեռանալու կարգախոսի ներքո տեղի է ունեցել նախկին մեքենայի գործառնական ուժեղ կողմերից մեկի՝ լավ կազմակերպվածության և կանոնակարգվածության կորուստը: Ուստի՝ այժմ մենք կանգնած ենք պետական մեքենայի հիմնովին նորացման անհրաժեշտության առջև:

Այս խնդիրն, իհարկե, բարդագույններից է: **Առաջին** հերթին՝ այն առումով, որ պահանջում է համակողմանի գիտելիքներ ու փորձառություն: **Երկրորդ**՝ այն շատ խորքային, արմատական տնտեսական ու քաղաքական շահերի վերադասավորումների է հանգեցնելու: Հետևաբար՝ խնդրի լուծումը պահանջում է հասարակության և առաջին հերթին՝ Հայաստանի բարձրագույն իշխանության քաղաքական վիթխարի կամքի և նվիրվածության դրսևորում՝ բոլոր մնացած շահերը երկրի ու հասարակության ընդհանրական շահերի հետ ներդաշնակեցնելու, հարկ եղած դեպքում նաև՝ ստորադասելու համար: Ի վերջո, իրականում՝ հենց երկրի ու հասարակության ընդհանրական շահերի լիարժեք պաշտպանությունն է, որ ապահովում է նաև մասնավոր սեփականության ու անհատի առավել մեծ պաշտպանվածությունն ու ազատությունը: Փորձենք անդրադառնալ պետական մեքենայի նորացմանն առնչվող առավել կարևոր հիմնախնդիրներին:

ա) Գաղափարաբանություն և բարոյականություն, թիրախային նպատակամղում, ժառանգորդականություն

Միանգամայն հիմնավոր են ՀՀ ԳԱԱ իսկական անդամ Ռուբեն Վարդանյանի հետևյալ խոսքերը. «Պետությունը, ինչպես և ցանկացած կենդանի օրգանիզմ, հոգի ունի: Ամեն պետության հոգին գաղափարախոսությունն է, գաղափարը»<sup>23</sup>: Մենք առայժմ չունենք ոչ միայն համայն հայության, այլև հայկական ներկա պետությունների երկարաժամկետ զարգացման նպատակները, հանրային ու պետական կյանքի կազմակերպման ու զարգացման բոլոր ոլորտներն ընդգրկող ամբողջական ռազմավարություն: Չունենք և պետական հարթության վրա դեռևս չենք էլ նախաձեռնել: Չունենք գոնե առաջիկա երկու-երեք տեսանելի տասնամյակների ուղենիշեր: Նման իրավիճակն օրինաչափորեն հանգեցրել է պետական մեքենայի գաղափարագրկմանը, հետևաբար նաև՝ բարոյագրկմանն ու թուլացմանը: Երկրի ու պետության անվտանգության, կայունության և զարգացման հեռանկարային նպատակների, քաղաքականությունների ու ծրագրերի բացակայությունը ամորֆություն է հաղորդում պետականաշինության գործընթացին և էապես ձևախեղում նրա նպատակամղվածությունը: Այդպիսի իրավիճակն իր հերթին հանգեցրել է նաև հասարակության գաղափարագրկմանն ու բարոյալքմանը, երկրի ու ազգի հետագա ճակատագրի հանդեպ անտարբերու-

<sup>23</sup> «Ազգային գաղափար», Եր., 2010 թ., N 11:

թյանը, հավատի կորստին: **Մեր պետությունը չունի նույնիսկ սոցիալ-տնտեսական ոլորտի կերպափոխման երկարաժամկետ համապարփակ ռազմավարություն, հետևաբար նաև՝ ծրագրեր:** Ընդունված մի քանի ռազմավարությունները վերաբերում են առանձին ոլորտների և առանձին խնդիրների, միմյանց հետ փոխկապակցված չեն, հեռու են գաղափարական և նպատակային ամբողջականությունից, հետևաբար նաև՝ զարգացման նպատակալաց ուղի նախանշելուց: Լավ է, զոհե, որ միջազգային կազմակերպությունների ու ֆինանսների փոխնախարարի նախաձեռնությամբ արդեն ունենք և տևական ժամանակահատվածում գործում է պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրերի համակարգը:

Չինական գերհսկա պետությունն, օրինակ, ունի իր արտաքին և ներքին զարգացման ռազմավարություն և գերակա թիրախներ ոչ միայն տասնամյակների, այլև առաջիկա հարյուրամյակի համար, որոնք պարբերաբար կատարելագործման ու ճշգրտումների են ենթարկվում: Պատահական չէ, որ այդ հսկան, ունենալով արտաքին և ներքին խոշորագույն հիմնախնդիրներ, իր անելիքն իմացող վարպետի նման, հանդարտությամբ (բայց ոչ դանդաղկոտությամբ) տարին տարվա վրա շարժվում է դեպի իր ազգային և՛ հեռավոր, և՛ մոտակա նպատակակետերը: Հենց դրա շնորհիվ էլ նրա արտաքին քաղաքական դրկտրինան հենվում է «**փափուկ ուժի**» հանդարտ, բայց հիմնավոր ու հաստատուն կիրարկման սկզբունքի վրա:

Մենք չունենք պրոֆեսիոնալ հիմքի և ամբողջական գաղափարաբանության վրա մշակված նման համակարգված պետական և ազգային թիրախներ զոհե առաջիկա տասնամյակների համար: Նաև դա է պատճառը, որ Հայաստանի կառավարության յուրաքանչյուր կազմի փոփոխության հետ միասին առաջ են քաշվում, որպես կանոն, բավարար վերլուծությունների, քննարկումների վրա չհիմնված, այլ մակերեսային պատկերացումների արդյունքում հապճեպորեն «թխված», ոչ ամբողջական, ներսում՝ չփոխկապակցված, պատեհապաշտությամբ թելադրված մի քանի տարվա ծրագրեր: Դրանք, որպես կանոն, ժամանակավրեպ են և կյանքի չեն կոչվում: Ավելին, ոչ միայն ամեն մի նոր կառավարություն, այլև ամեն մի նոր նախարար մի կողմ է դնում նախորդների ծրագրերն ու մոտեցումները, նրանց ջանքերն ու կատարված ծախսերը: Կարծես երկրի պատմությունը սկսում է իրենից, ուստիև փորձում է այն ուղղորդել նեղանձնական պատկերացումներով կամ շահերով: Իսկ նախորդներն էլ, ինչպես հորական տնից բերած սեփականություն, իրենց հետ են տանում ձեռքի տակ եղած փաստաթղթերն ու տեղեկատվությունը:

**Պետք է ունենալ տասնամյակների ռազմավարություն ու նպատակներ, որոնց էական փոփոխություններն ու շտկումները հարկ է իրականացնել՝ շատ զգուշորեն քննարկելով նախորդների մտքերը, մոտեցումները և կատարած աշխատանքները, որպես կանոն՝ մասնակից, խորհրդատու կամ աջակից դարձնելով նախորդներին:**

Այդպես է ստեղծվում պետականության համակարգի ժառանգորդականությունը: Այս նպատակն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է նաև օրենսդրորեն ու ինստիտուցիոնալ առումով կանոնակարգել հաջորդական կառավարությունների ու պաշտոնյաների փոփոխությունների գործընթացը: Մինչդեռ, այն այժմ կրում է հներին շնորհակալություն հայտնելու (անկախ արդյունքից) և նորերին անվերապահորեն զովերգելու պարզունակ բեմադրութ-

յունների տեսք:

Ինչպես արդեն նշեցինք, լուրջ քայլ պետք է համարել կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի թիվ 1207-Ն որոշմամբ «Կայուն զարգացման ծրագրի» ընդունումը, որն առկա իրավիճակը գնահատելով, սոցիալ-տնտեսական կյանքի հիմնախնդիրները վեր հանելով, նախանշում է մինչև 2021 թ. պետության ներքին զարգացման ուղենիշերը: Ցավոք, այն կարծես թե մնացել է միայն մասնակիորեն հաջողված փաստաթղթի կարգավիճակում և նրա իրագործումը դեռևս կառավարության ուժից վեր է:

- Մինչդեռ, ՀՀ կառավարության նույն որոշմամբ էկոնոմիկայի նախարարին հանձնարարված էր մինչև 2009 թ. հունվարի 31-ը ներկայացնել ծրագրի իրականացումն ապահովող 2009-2012 թթ. միջոցառումների նախագիծը և մինչև 2008 թ. դեկտեմբերի 30-ը՝ ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգն ու դրա զարգացման միջոցառումների ծրագիրը: Մեր որոնումները (իրավական ակտերի ցանկում և կառավարության ու էկոնոմիկայի նախարարության էլ-կայքերում) փաստում են, որ այդ հանձնարարականները մնացել են անկատար:

- Կառավարության 2010 թ. (24.12. 2009 թ., 1523-Ն որոշում) և 2011 թ. (13.01.2011 թ., 111-Ն) միջոցառումների ծրագրերի և գերակա խնդիրների կազմում պետական կառավարման մասով «Կայուն զարգացման ծրագրի» իրագործմանն ուղղված միջոցառումներ չեն պարունակվում (բացառությամբ՝ էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման մեկ-երկու քայլերի): Սա հավանաբար խոսում է այն մասին, որ «Կայուն զարգացման ծրագրի» մշակման փաստացի նախաձեռնողները միջազգային կառույցներն են և ոչ թե կառավարությունը: Քանի որ կառավարության մարմինները դրանցում, նախկինի պես, ավելի շուտ երակետային ինֆորմացիա տրամադրողի դերում են եղել և բավարար մասնակցություն չեն ունեցել քաղաքականությունների ստեղծման ու քննարկումների գործընթացում, այդ կարևոր փաստաթուղթն իրականում չի դարձել կառավարության գործունեության գաղափարաբանություն և ուղենիշ: Այն մնացել է որպես ֆորմալ կերպով առկա փաստաթուղթ:

- 2012 թ. համար Հայաստանն ընդունել էր պետական կառավարման որակի կտրուկ բարելավման՝ Արևելյան Եվրոպայի և Մերձբալթիկայի երկրների 2007 թ. միջինից բարձր նպատակակետեր: Սակայն, ինչպես հասկացանք, կառավարությունը որոշումն ընդունելուց հետո չի սահմանել մոնիթորինգի համակարգ և իր սահմանած թիրախներին հասնելու ընթացքին չի հետևում: Ուստի ամենօրյա կյանքի իրողություններից կարելի է հետևություն անել, որ առանձին ոլորտներում կատարված հատվածական փոփոխություններն ընդհանուր պատկերը քիչ են բարելավել:

Էկոնոմիկայի նախարարին տրված վերոհիշյալ հանձնարարականները ձևական առումով կարելի է ճիշտ հասցեագրված համարել: Բայց ռեալ իրականության մեջ, մեծ հաշվով, դժվար է պատկերացնել, թե էկոնոմիկայի նախարարությունն իր անցյալ և ներկա ինստիտուցիոնալ ու պրոֆեսիոնալ կարողություններով ի վիճակի կլինի՞ սման խիստ մասնագիտական և միաժամանակ՝ ծավալուն աշխատանքում գաղափարակրի, լոկոմոտիվի և համակարգողի դեր կատարել: Հատկապես այդօրինակ համակողմանի ծրագրերի իրագործմանն առնչվող որոշումներ կայացնելիս անհրաժեշտ է ելնել փաստացի իրողություններից և գոնե այդ դեպքերում դրսևորել ոչ ձևական, այլ

ավելի ճկուն և իրատեսական մոտեցումներ: Այս առումով օգտակար կարող է լինել Նոր Ձեռնարկի փորձի ուսումնասիրությունը: Մասնավորապես, այստեղ համապետական և հանրային կարևորություն ստացած որևէ հիմնախնդրի լուծման համար ստեղծվում է հատուկ նախարարություն, որի միակ պատասխանատվությունն այդ հիմնախնդրի լուծումներն ապահովելն է: Այն գործում է ոչ երկարատև ժամանակահատվածում, այլ 3-5 տարիների միջակայքում՝ հիմնախնդրի առանձնահատկությունից ու լուծման տևողությունից կախված: Դրանք այն մշտական, մեր պատկերացրած ծանր աշխատակազմերով նախարարությունները չեն, այլ 15-20 պրոֆեսիոնալներից բաղկացած ճկուն, նպատակամղված և բավարար չափով լիազորված քիմեր: Վերջիններիս օրնիբուն գործունեության քիրախը միմիայն իրենց առջև դրված խնդիրն է լինում: Նրանք չեն ծանրաբեռնվում ավանդական կառույցներին բնորոշ՝ ամենօրյա քթաբանությամբ և չեն շեղվում տվյալ հիմնախնդրից դուրս գտնվող այլ հարցերին առնչվող խորհրդակցություններում: Մեր պարագայում այս մոտեցումն առաջմ շատ հաճախ կիրառելի չէ, առաջին հերթին՝ ներկա կռալիցիոն կառավարության համակարգում նախարարությունների ու նախարարների արհեստականորեն սահմանափակված դերակատարության և իրավագործության պատճառով: Պետք է փորձել գտնել այս մոտեցման և մեր իրողությունների միջև այլընտրանքային մեկ այլ՝ ոչ ստանդարտ լուծում: Տվյալ դեպքում, «Կայուն զարգացման ծրագրի» բաղադրիչներից՝ երկրի ինտոլիտուցիոնալ արդիականացման և պետական կառավարման համակարգի որակի բարելավման հիմնախնդիրների լուծումը համակարգելու և ամբողջ ծրագրի մոնիթորինգը կազմակերպելու համար նպատակահարմար է դիտարկել հետևյալ լուծումները.

- ՀՀ Նախագահի կամ կառավարության աշխատակազմերից որևէ մեկի համակարգում հիմնել Պետական կառավարման համակարգի վերափոխման առանձին ծրագրի իրականացման գրասենյակ (ԾԻԳ),

- այդ ԾԻԳ-ի կառավարման խորհուրդը ստեղծել ՀՀ Նախագահի հատուկ տվյալ նպատակով ներգրավված խորհրդականի գլխավորությամբ, կառավարության աշխատակազմի և համապատասխան պետական մարմինների պատասխանատուների մասնակցությամբ,

- նախարարություններում և գերատեսչություններում, որտեղ չկան այդպիսիք, կազմակերպել ոլորտի հեռանկարային քաղաքականությունների և զարգացման ծրագրերի ստեղծմամբ զբաղվող և դրանց իրագործման ընթացքը մոնիթորինգի ենթարկող առանձին ստորաբաժանումներ, որոնք որևէ այլ ընթացիկ խնդիրների մեջ չպետք է ներգրավվեն. այսօր, եթե առկա են այդպիսի անվանումներով ստորաբաժանումներ, փաստացի կերպով նրանք ավելի շատ ներգրավված են ընթացիկ աշխատանքներում և չհաշված առանձին անհատների բացառությունները, առկա է պրոֆեսիոնալիզմի խիստ պակաս,

-այս աշխատողների աշխատավարձերը, հաշվի առնելով նրանցից պահանջվող մասնագիտական բարձր որակները և ակնկալվող համակարգային մեծ էֆեկտները, պետք է սկզբում գոնե՝ առնվազն երեք անգամ բարձր լինեն ներկա համապատասխան հաստիքադրույքներից:

Նման ոչ ավանդական մոտեցումը թելադրված է մասն հետևյալ իրողությունները հաշվի առնելու անհրաժեշտությամբ: Նախ, երկրի առջև ծառայած այս բարեփոխումները իրենց բովանդակությամբ և համալիրության աստիճանով



աննախադեպ են: Ծրագրի հաջող իրագործումից են կախված լինելու հետագա արտաքին ու ներքին մարտահրավերների լուծումները: **Երկրորդ**, անցած երկու տարիները ցույց տվեցին, որ ավանդական մոտեցումներով խնդիրը տեղից քիչ է շարժվել: **Երրորդ**, այս համալիր ծրագիրը պահանջում է տվյալ հարցերով պետական մարմինների աշխատանքների համակարգում: Վարչապետի առօրյա բազմազբադրությունը նրան հնարավորություն չի տալիս մշտապես համակարգել և ուղղորդել այդ ամենօրյա աշխատանքները: Իսկ որևէ նախարարի իրավասությունների շրջանակը բավարար չէ այդ գործառույթն իրագործելու համար: **Չորրորդ**, ԾԻԳ-ի ստեղծումը, բացի պրոֆեսիոնալներին ներգրավելու համար պահանջվող բարձր վարձատրությունից, թելադրված է նաև նրա աշխատանքները բացարձակապես տվյալ ծրագրի ստեղծման և իրագործման մեջ նպատակամղելու անհրաժեշտությամբ, ինչը ներկա իրողություններում անհնար է նախարարությունների աշխատակազմերի միջոցով, քանզի տվյալ խնդիրներն իրենց համապետական ու միջուլորտային բնույթով դուրս են որևէ մեկ նախարարության իրավասությունների շրջանակից: **Հինգերորդ**, այսօր Հայաստանի պետական մարմինների աշխատակիցների աշխատավարձերն ու սոցիալական ապահովության պայմանները անհամեմատ հետ են մնում ինչպես զարգացած կառավարման համակարգ ունեցող երկրների ցուցանիշներից, այնպես էլ մեր երկրում նորմալ կենսապայմաններ ապահովելու պահանջներից: Հասկանալի է, որ դա թելադրված է պետական ֆինանսների ներկա հնարավորություններով: Սակայն այս խնդիրը գոնե պետք է փուլ առ փուլ լուծում ստանա: Առաջին այդպիսի քայլը ԾԻԳ-երի համակարգի ստեղծումն է: Այսօր էլ կարելի է գտնել պետական մարմինների գործունեության, հետևաբար նաև՝ ամբողջ երկրի ուղեղային կենտրոններ հանդիսացող (քաղաքականության և ծրագրերի մշակումը կազմակերպող) ստորաբաժանումների մասնագետների բավարար վարձատրման միջոցներ: Դրանք ընդհանուր թվով կարող են կազմել 200-300 մարդ:

## բ) Պետական խորհրդատուների ինստիտուտ

Որակյալ պետական մեքենա ունեցող երկրներում որոշումների կայացման մեջ մեծ դերակատարում ունեն նախագահների և վարչապետների խորհրդատուների ինստիտուտները: Հայաստանում ծրագրերն ու որոշումները, որպես կանոն, պատրաստվում են ամբիջապես նախարարությունների աշխատակազմերի ուժերով: Դրանք կրում են գերատեսչական և անձնական, վերջին շրջանում նաև՝ կոալիցիոն շահերի ու բարքերի խիստ ազդեցությունը: Բացի այդ, պաշտոնյաները, հատկապես աշխատակազմերի աշխատանքների վատ կազմակերպվածությամբ և վարձատրությամբ թելադրված՝ ցածր պրոֆեսիոնալիզմի հետևանքով, օրնիբուն զբաղվում են ամենօրյա թղթաբանություններով և խորհրդակցություններով: Ժամանակի և պրոֆեսիոնալիզմի առումով նրանք ի գործու չեն որակյալ վերլուծություններ կատարել և հիմնախնդիրների լուծման համար ստեղծագործ գաղափարներ արտադրել, դրանց վերաբերյալ որակյալ փաստաթղթեր ստեղծել: Ավելին, թույլ աշխատակազմերի պատճառով նույնիսկ մասնագիտացված խորհրդատվական կազմակերպությունների կողմից

ստեղծված ծրագրային փաստաթղթերի հետագա կառավարումը առանձին դեպքերում մեր պաշտոնյաների համար ուժից վեր գործ է դառնում: Հիշենք, թե մինչև 1997 թ. ինչպիսի խառնաշփոթ էր միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի կառավարման գործում, երբ գրեթե որևէ ինստիտուցիոնալ կանոնակարգում չկար և յուրաքանչյուր բարձրաստիճան պաշտոնյա անհատապես իրավասու էր կամայականորեն տնօրինել միջոցներն ու ծրագրի բախտը: Այսօր, բարեբախտաբար, վիճակն այդ մասով քիչ թե շատ կանոնակարգված է: Այս իրավիճակում մեզ մոտ **շատ ավելի է կարևորվում Հայաստանի նախագահի և վարչապետի խորհրդատուների ինստիտուտների և դրանց գործառնության կայուն մեխանիզմների ստեղծումը:** Տվյալ ինստիտուտները պետք է լրացնեն այն կարևորագույն ճեղքվածքը, որն առկա է հեռանկարային ծրագրերի ու ռազմավարությունների, քաղաքականությունների ու դրանց իրագործման ինստիտուցիոնալ մեխանիզմների և գործիքակազմի ստեղծման միջև: Այսինքն՝ դրանք պետք է կյանքի կոչեն նոր մտքերն ու մոտեցումները վերլուծելու, նրանց վրա հիմնվող լուծումների գործընթացները նախագծելու, քաղաքականությունն ուղղորդելու և դրա կազմակերպումը համակարգելու գործը:

**Այս ինստիտուտները կարող են դառնալ պետական մեքենայի նորացման գործի ճարտարապետներն ու նավավարները:** Նրանք պետք է լինեն նաև կարևորագույն հարցերում որոշումներ կայացնելու գործում նախագահի և վարչապետի հուսալի հենասյուները՝ ինչպես այդ որոշումների համար ներկայացված տեղեկատվության հուսալիությունը ստուգելու, այնպես էլ առկա իրավիճակի և առաջարկվող լուծումների արդյունավետությունն ու իրատեսականությունը գնահատելու, այլընտրանքային քայլեր նախապատրաստելու առումով: Անցած 20 տարիների ընթացքում դրանք ինստիտուցիոնալ առումով լիարժեքորեն չեն ձևավորվել: Բացառությամբ մի քանի առանձին անհատների, դրանցում լրջորեն աշխատող պաշտոնյաներ չեն ներգրավվել: Որպես կանոն, այդպիսի պաշտոնների նշանակումը կրել է ձևական բնույթ՝ նպատակ ունենալով պարզապես այս կամ այն անձին որոշակի կարգավիճակ շնորհել: Նրանց ճնշող մեծամասնությունը չի մասնակցել կամ դերակատարություն չի ունեցել կարևորագույն հարցերի կամ ծրագրերի հետազոտմանը կամ որոշումներ կայացնելու նպատակ հետապնդող քննարկումներին:

**Այնհայտ է, որ նախագահն ու վարչապետը նման դեպքում հայտնվում են խոցելի վիճակում:** Քիչ չեն պաշտոնյաների գերատեսչական, կուսակցական և անձնական շահերով, ոլորտային քաղաքականության սխալներով կամ անբավարար պրոֆեսիոնալիզմով թելադրված նրանց բացթողումները: Պատճառն այն է, որ տարբեր մակարդակների պաշտոնյաների միակողմանի հաղորդումները նրանց թույլ չեն տվել ճիշտ ժամանակին կամ օպտիմալ որոշումներ կայացնել: Օրինակ՝ նախարարներից մեկը երկուսուկես տարի գեղեցիկ գրաֆիկներով հաշվետվություններ էր ներկայացնում իր գործերի բարեհաջող ընթացքի վերաբերյալ: Համապատասխան խորհրդատուների ինստիտուտի բացակայության պայմաններում դրանք բավականին դյուրին ընդունելություն էին գտնում: Եվ միայն այդ անձի պաշտոնագրկումից հետո պարզվեց, որ նրա վատ աշխատանքն արժեցել է տասնյակ միլիոնավոր դոլարներ: Պետական մեքենայի կայուն և վստահելի գործառնության համար անգամ անհրաժեշտ է օրենսդրորեն կարգավորել հիշյալ ինստիտուտներին ներկայացվող նվազագույն պահանջները,

ինչպես նաև սահմանել, որ **կարևորագույն որոշումներ կայացնելու համար պարտադիր են պրոֆեսիոնալ, նաև՝ իշխանության այլ մարմիններից անկախ գործող խորհրդակցականների ու խորհրդատվական կառույցների վերլուծությունները, նրանց այլընտրանքային առաջարկների առկայությունը և դրանց բավարար քննարկումները:**

գ) **Կոալիցիոն կառավարման համակարգ**

Չնախելով ավետական մեքենայի օրինակ է կոալիցիոն կառավարության ներկայումս գործող մոդելը: Իհարկե, կոալիցիոն կառավարության ինստիտուտը կյանքի իրավունք ունի, բայց ո՛չ այն մոդելով, ինչն առկա է մեզ մոտ: Այստեղ ձևախելով ԵՄ պետական կառավարման կազմակերպման հիմնարար սկզբունքները, արհեստականորեն արժեզրկված են նախարարությունների ու նախարարների ինստիտուտները, որոնք հայտնվելով կուսակցություններից վասալային կախվածության մեջ՝ փաստորեն վերածվել են միջնադարյան «կերակրումների» համակարգի, որը ժամանակին խոտանվել է անգամ ռուսական առաջին ցարերի կողմից: Մեզանում դա կոալիցիոն գործընկերների կուսակցական-խմբակային շահերի բավարարման միջոց է և քիչ կապ ունի պետական շահերի և ժողովրդավարական կառավարման հետ: Ուստի առնվազն անկեղծ չեն այդ եղանակով երկրի ու ազգի շահերին ծառայելու իրենց նպատակների մասին որոշ քաղաքական գործիչների խոսակցությունները: Իրականում արդյունավետ, պետականությանն ու համազգային շահերին ծառայող կոալիցիոն կառավարությունը չի ստեղծվում պետական պաշտոնները և դրանց ընձեռած վարչական լծակներն ու նյութական ռեսուրսները միմյանց միջև բաժան-բաժան անելու սկզբունքով, այլ երկրի զարգացման **փոխհամաձայնեցված միասնական ծրագրի** (ոչ թե՝ ամորֆ հռչակագրի) կենսագործման շուրջ համախմբմամբ: Ծայրահեղության է հասել ամեն մի նախարարությունում կամ գերատեսչությունում կոալիցիոն կուսակցությունները ներկայացնող փոխնախարարների ինստիտուտի պրակտիկան: Նման **մոտեցման դեպքում չի եղել և չի լինի միասնական թիմ, պրոֆեսիոնալիզմ, համազգային շահ և արդյունավետություն:** Դրա արդյունքում կոալիցիայի անդամ ուժերը վերջին տարիներին հրճվանք են ապրում ոչ թե կոալիցիոն ընդհանուր ծրագրի իրագործման հաջողության համար, այլ նրանով, որ իրենց գործընկեր կուսակցությանը պատկանող ոլորտների համեմատ իրենք ավելի քիչ ձախտողումներ ունեն: **Այսինքն՝ գործում է ոչ թե միասնական թիմի հաջողության ապահովման, այլ կուսակցական շահերն առաջ մղելու հետ միասին՝ սեփական դեմքը փրկելու սկզբունքը:**

Արդյունավետը ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի ու կոալիցիոն ուժերի առաջնորդների համատեղ ընտրությամբ, պրոֆեսիոնալ կադրերի ներգրավմամբ միասնական, գործուն թիմի ձևավորումն է: Այդտեղ որևէ պաշտոնյայի նշանակման կամ ազատման հարցը չի լուծվում մեկ կուսակցության կողմից: Պաշտոնյան, եթե նույնիսկ նրա թեկնածությունն առաջադրել է որևէ քաղաքական ուժ, իր ստանձնած ծրագրերի հիմնավորվածության և իրագործման արդյունքների համար հաշվետու չպետք է լինի տվյալ ուժին, այլ

միայն **հասարակությանը, նախագահին և Ազգային Ժողովին**: Միայն այդ դեպքում է հնարավոր համախմբված, ուժեղ և արդյունավետ կոալիցիոն կառավարության գոյությունը:

դ) Հրապարակայնություն և թափանցիկություն

Շատերն այս խնդրին վերաբերվում են սուկ որպես արևմտյան նորածնության՝ մոդայի: Իրականում այն ոչ միայն հասարակական վերահսկողության և քաղաքացիական հասարակության զարգացման նախապայմանն է, այլ նաև՝ հասարակության ու պետական մեքենայի միջև երկխոսության, պետական նախաձեռնությունների շուրջ լայն հանրության համախմբման և հասարակական աջակցության ապահովման միջոցը: Մեզ մոտ, սակայն, պետական մարմինների կողմից տեղեկատվության տրամադրումը սահմանափակված է պաշտոնյաների անհատական կամ գերատեսչական շահերով, ուստի հասարակությունն, ի վերջո, շատ ընդհանրական ձևով է տեղեկացվում: Դրա ձևակազմերը և հրապարակման ու թարմացման պարբերականությունն այնքան աղճատված են, որ թույլ չեն տալիս հասարակությանն ու նրա կառույցներին խորը և հստակ պատկերացումներ կազմել երկրի պետական համակարգի գործունեության, նրա որոշումների հիմնավորվածության և այլ իրողությունների մասին: Մուտք գործեք մեր պետական մարմինների էլեկտրոնային կայքեր և դրանց խայտառակ վիճակից ակնհայտ կդառնա ամեն բան: Հասարակությունը զրկված է հավասար տեղեկացվելու հնարավորությունից և իրավունքից: Խոսքն, իհարկե, չի վերաբերում երկրի անվտանգությանը կամ համանման խորհրդապահական տեղեկատվությանը: Հասարակությանը զրկելով բավարար տեղեկատվությունից, պետական մեքենան դրանով իր ձեռնածությունները և անարդյունավետ կամ ոչ իրավաչափ գործողություններն արդարացնելու հնարավորություն է ստանում, սակայն զրկվում է հասարակության աջակցությունից: Հետևաբար՝ **անհրաժեշտ է յուրաքանչյուր ոլորտի ու կառավարման մարմնի համար օրենսդրական ակտերով սահմանել նվազագույն տեղեկատվության ձևակազմերն ու հրապարակման կանոնակարգերը**: Դրանք պետք է մշակվեն պրոֆեսիոնալ մակարդակով և քննարկվեն քաղաքացիական հասարակության ինստիտուտների հետ:

ե) Պրոֆեսիոնալիզմ

Հայաստանի պետական կառավարման համակարգի համապատասխան մարմինների, դրանցում ներգրավված **պաշտոնյաների և մասնագետների ճնշող մեծամասնության մոտ պակասում են տվյալ ոլորտում այդ պահին առկա վիճակի վերլուծության, գնահատականներ տալու, հեռահար կամ մարտավարական խնդիրներ սահմանելու, դրանց լուծումների այլընտրանքային մոտեցումներ փնտրելու ունակությունները**: Մեր հանրության և իշխանությունների մոտ ստեղծվել է տպավորություն, որ պետական ապարատը զգալի ֆինանսական միջոցներ է ծախսում անտեղի կամ անօգուտ խորհրդատվությունների վրա: Խոստովանենք, որ այս իրողությունն իսկապես առկա է: Միայն թե, որպես կանոն, ոչ թե խորհրդատվություններն են լինում անտեղի պատվիրված կամ խորհրդատուներն

են անորակ: Իրականում՝ չափազանց շատ են մասնագիտական առավել խոր հետազոտություններ ու մշակումներ կատարելու նպատակով խորհրդատուներ ներգրավելու պետության կարիքները: Բոլոր պետություններում է այդպես, և այդ ծառայությունները պետական մեքենայի անբաժան ուղեկիցն են: **Խորհրդատվական ծառայությունների անարդյունավետության գլխավոր պատճառը խորհրդատուների ներգրավման համար առաջադրանքի պայմաններ մշակելու կամ այդ խորհրդատվությունների արդյունքները (հաշվետվությունները) ընդունելու, դրանց հիման վրա որոշումներ կայացնելու գործում պաշտոնյաների ունակությունների անբավարարությունն ու տվյալ աշխատանքի կազմակերպման և կանոնակարգման գործընթացում առկա էական բացթողումներն են:**

Դրանք արդյունք են այն բանի, որ անկախության առաջին տարիներից մեզանում միանգամայն սխալ որակումներ տրվեցին խորհրդային հազարավոր մասնագետների ու մենեջերների բանակին: Նրանք, հսկայական փորձառություն, կապեր ու գիտելիքներ ունենալով հանդերձ, դուրս մղվեցին պետական մեքենայից, շատերն էլ նույնիսկ՝ երկրից: Բացի այդ, պետական պաշտոնյաների խղճուկ աշխատավարձերը պետական մեքենայից ինքնակամ դուրս մղեցին բանիմաց, կառավարման հմտություններ կամ գործնական հատկանիշներ ունեցող կադրերին: Նրանք կա՛ն արտագաղթեցին երկրից, կա՛ն ներգրավվեցին մասնավոր բիզնեսի ոլորտում: Պատճառն այն է, որ մի կողմից՝ չտեսան այն վեհ գաղափարները, հանուն որոնց պետք է գոյատևեին խղճուկ աշխատավարձերով, իսկ մյուս կողմից՝ չհամակերպվեցին նոր՝ «թայֆայական» գործելակերպի հետ: Ուստի այդ տարիներին ճնշող մեծամասնությամբ, կառավարման մարմիններում մնացին կա՛ն ավելի քիչ գործնական հատկանիշների և մասնագիտական կարողությունների տեր անձինք, կա՛ն էլ պետական միջոցները թալանելու նպատակ ունեցողները: Շատերը կհիշեն 1991 թ. ՀՀ Արտաքին տնտեսական կապերի նախարար նշանակված Եսայի Ստեփանյանին, ով նման մղումներով կարողացավ տապալել մի շարք սփյուռքահայերի ներդրումային ծրագրերը: Նրա կերպարը տիպական էր, քանզի պաշտոնեության նման շերտի գլխում ո՛չ լիարժեք ծրագրեր կծնվեին և ո՛չ էլ վերջիններս իշխանավորներին այդպիսիք ներկայացնելու նախաձեռնություն ու համարձակություն կդրսևորեին: Այս առումով վիճակն այժմ՝ 20 տարի անց էլ, էապես չի փոխվել:

#### զ) Լուծումը պետական մեքենայի հիմնովին թարմացումն է

Կադրային կազմի թարմացումը կարող է արդյունավետ լինել՝ զուգակցվելով հետևյալ գործողությունների հետ: Կտրուկ բարձրացնել պետական պաշտոնյաների աշխատավարձերը, բարելավել նրանց պաշտպանվածությունը, սոցիալական ապահովության և աշխատանքային պայմանները, որոնց համար ֆինանսական ռեսուրսներ մասամբ կարելի է ստանալ մեծաթիվ ավելորդ հաստիքների լուծարումից: Այս խնդրի լուծման համար կարելի է կիրառել պահանջվող ֆինանսական միջոցների հայթայթման նաև այլ մեխանիզմներ: Կադրային կազմի հիմնովին թարմացումն, անշուշտ, պետք է ուղեկցվի երիտասարդների նոր ներհոսքի ապահովմամբ: Երիտասարդացման գործընթացը, սակայն, չպետք է վերածվի փորձառու, բանիմաց ու իրազեկ կադրերի (որոնք

առանց այդ էլ քիչ են մնացել) դուրսմղման անգլիախոսության հատկանիշների ծայրահեղացված շքերթի, այլ իսկապես բարձր կրթական մակարդակ և ստեղծագործ միտք ունեցող և երկիրը սիրող անհատների փնտրտուքի: Ղազախստանում կոմունիստ նախագահ Նուրսուլթան Նազարբանև անկախացման առաջին իսկ տարիներից կարևորեց գիտելիքի և պրոֆեսիոնալ կրթություն ստացած կադրերի կարևորությունը: Այդ նպատակով պետական միջոցների հաշվին յուրաքանչյուր տարի զգալի թվով խոստումնալից երիտասարդներ գործուղվեցին աշխարհի լավագույն բուհերում ուսանելու: Նրանց վերադարձն ասպահովվում էր բարձր պաշտոններում կամ բարձր վարձատրվող աշխատատեղերում նշանակումների միջոցով: Այսօր Ղազախստանի կառավարության պրոֆեսիոնալ և կրթական մակարդակն ամենաբարձրն է ԱՊՀ երկրների մեջ: Վերջին տարիներին այս ուղղությամբ որոշակի հաջողություններ է արձանագրել նաև Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլին: Եվ ահա «2011 թ. գործարարությամբ զբաղվելու» համաթվով այս երկիրը 183 երկրների մեջ 12-րդ դիրքում է<sup>24</sup>: Սա պետական պաշտոնյաների պրոֆեսիոնալ մակարդակի բարելավման մի քանի տարվա համառ աշխատանքի արդյունքն է: Այս երկու երկրների կուտակած փորձի մանրամասներից կարելի է օգտակար հետևությունների հանգել: Հայաստանում միայն վերջին տարիներին նախաձեռնվեց արտասահմանի բարձրակարգ բուհերում՝ «Լույս» հիմնադրամի միջոցով, հայազգի ուսանողների կրթությանն աջակցելու օգտակար գործը: Սակայն նրա մեխանիզմները զարգացման և քիրախափորման կարիք ունեն հատկապես ՀՀ պետական մեքենայի պահանջների բավարարման և կողմերի իրավասությունների հստակեցման առումով:

Միաժամանակ, պետք է համախմբել փորձառու, պրոֆեսիոնալ և չվարկաբեկված անհատների մի որոշակի խմբի, որը բարոյական մթնոլորտ ու նախաձեռնողական վարքագիծ կարմատավորի պաշտոնության շրջանում և յուրատեսակ դպրոց կձևավորի երիտասարդ պետական ծառայողների համար:

**Հարկ է վերանայել և լիարժեք կերպով հստակեցնել ՀՀ պետական կառավարման մարմինների գործառույթներն ու իրավասությունները**, որոնք հաճախ անորոշ են կամ կրկնում են մեկը մյուսին, ուստի նրանց միջև տրամաբանական կապի շղթան կտրված է: Այս խնդիրը մասնակիորեն հատվում է «Գիլիոտին» պայմանական անվանումը կրող նոր նախաձեռնվող ծրագրի հետ: Վերջինիս գործառնական նշանակությունը ՀՀ իրավական դաշտի մեջ կրկնություններ, հակասություններ ու ավելորդ պրոցեդուրաներ ենթադրող դրույթների բացահայտումն ու հաղթահարումն է: Կարիք է զգացվում ընդլայնել այդ ծրագրի տիրույթը նաև պետական կառավարման մարմինների գործառույթների և իրավասությունների սահմանման ու բաշխման ամբողջականության ու լիարժեք փոխկապակցվածության ասպահովման ոլորտում: Հարկ է վերանայել նաև պետական կառավարման մարմինների պաշտոնների անձնագրերը, որոնք նախկինում շտապողականությամբ են կազմվել և էականորեն հստակեցվելու, օպտիմալացման կարիք ունեն: Անհրաժեշտ է բարելավել Քաղաքացիական ծառայության ինստիտուտը՝ նրա իրավասությունների շրջանակներում մասնագետների և պաշտոնյաների մասնագիտական անկախության ու պաշտպանվածության ամրապնդման առումով: Այս սկզբունքը լիովին անտեսված է, քանզի մասնագետի եզրակացության կարևորման, պատասխանատվու-

24 St u http://rating.rbc.ru/article.shtml?2010/11/13/33043517

թյան և իրավունքների հարց ներկա պետական մեքենայում պարզապես գոյություն չունի:

## 6. Տնտեսության փոխադրում ինովացիոն հենքի վրա

Աշխարհում այսօր գիտությունն ու տեխնիկան զարգանում են խիստ արագացված տեմպերով: Ոչ հեռու ապագայի խնդիր է ոչ միայն ամխաշրածնա-լին պաշարների սպառումը, այլև դրանց փոխարինող այլ աղբյուրների արդյունաբերական շահագործումը: Նավթի ու գազի տիրապետության դարաշրջանին փոխարինելու է գալիս գիտելիքի, տեղեկատվության և տեխնոլոգիաների դարաշրջանը: **Այն ազգերն ու պետությունները, ովքեր հանդես կբերեն բարձր ինտելեկտ և կազմակերպվածություն, նոր գիտելիքների, գաղափարների ու հայտնագործությունների կարողություններ կունենան, նրանք էլ կլինեն առավել մրցունակ: Այսինքն՝ ներկա զարգացումները ազգերի բնական հիերարխիա ձևավորելու առումով տրամաբանական լուծման հնարավորություն են ստեղծում:**

Եթե նույնիսկ Հայաստանին առաջիկայում հաջողվի վերականգնել տնտեսական աճի նախկին բարձր տեմպերը, ինչը լիովին հնարավոր է, դա չպետք է մեզ գոհացնի, առավել ևս՝ հանգստացնի: Այն կարող է կրել միայն կարճաժամկետ բնույթ, քանի որ անցած 20 տարում մեր պետական մեքենայի և գործարարների մտքի թռիչքը (առանձին բացառությունները չհաշված) պարզունակ առևտրով, շինարարությամբ, հանքարդյունահանմամբ զբաղվելուց ավելի վեր չի բարձրացել: Նույնիսկ այս և մյուս ավանդական ճյուղերում մենք դեռևս նախորդ դարի տեխնիկական լուծումների մակարդակի վրա ենք, թեև սպառողներին գնի, որակի, քաշի մեջ խաբելու գործում ավելի ենք հմտացած: Մեզանում քիչ թե շատ զարգացում են ապրել հանքարդյունահանումը, սննդի արդյունաբերությունը, ռեստորանային բիզնեսն ու առողջապահության առանձին ուղղությունները: Որոշակիորեն զարգացել են հիմնականում՝ ներքին շուկային միաված ոլորտները: Իհարկե, զարգացած երկրներում այս ոլորտներում էլ մշտապես կատարվում են տեխնիկական վերազինումներ և կազմակերպչական վերափոխումներ: Սակայն դրանց շարժիչ ուժը նորամուծություններն ու նորարարություններն են, որոնք կարծես շրջանցում են Հայաստանը, քանի որ մեզանում արհեստականորեն (իշխանության լծակների լայն կիրառմամբ) ձևավորվել են մոնոպոլիաներ ու օլիգոպոլիաներ, որոնք որպես տնտեսական կատեգորիա՝ ուղղակի վերացրել են մրցակցությունը: Բնական է, որ դա հանգեցրել է նաև նորամուծությունների միջոցով բիզնեսի արդյունավետությունը, հետևաբար նաև՝ մրցունակությունը բարձրացնելու ձգտման վերացմանը: Ցածր արդյունավետության հետևանքով առաջացող պրոբլեմները լուծվում են գների արհեստական բարձրացման և սպառողներին խաբելու ճանապարհով: Ավելին, ոչ միայն նոր ճյուղեր չեն ստեղծվում, այլև կազմաքանդվել են հեռանկարային արտադրությունները, օրինակ՝ քիմիական արդյունաբերությունը, որն արտադրություն լինելով հանդերձ, միաժամանակ նաև գիտություն է և նորարարությունների մեծ դաշտ: Հայ գիտնականները կիրառական նշանակության մեծաթիվ մշակումներ ու գործելու ասպարեզ ունեն հենց այս ոլորտում: Մինչդեռ, մեզ մնացել է (կամ

ավելի շուտ՝ էլ չի մնացել) սուկ «Նաիրիտը»: Տեղեկատվական տեխնոլոգիաներն էլ, նկատի չունենալով համացանցը և հեռահաղորդակցությունը, Հայաստանում հանդես են գալիս առայժմ առավելապես ծրագրավորման ոլորտի տեսքով, որն, անշուշտ, կարող է դառնալ տնտեսության լոկոմոտիվներից մեկը, սակայն պետական կիսատ-պռատ քաղաքականության պատճառով այն դեռևս դժվար է կայացած ոլորտ համարել: Տնտեսության այսպիսի պարզունակ կառուցվածքով, «մրցունակությամբ» կամ գիտելիքներով մենք անհաղորդ ենք մնալու արտաքին շուկաների պահանջներին և այնտեղ մուտք գործելու մեխանիզմներին, այսինքն՝ **տեղ չենք ունենալու աշխարհում:** Նույնիսկ գյուղատնտեսական արտադրության մրցունակությամբ, որը նույնպես զգալի ներուժ ունի, 20 տարիների ընթացքում վարած քաղաքականության արդյունքում մենք հետ ենք գնացել:

Տնտեսական, հետևաբար նաև՝ ռազմական ու քաղաքական ճեղքում կարողացել են ապահովել միայն այն պետությունները, որոնցում երկրի զարգացման ռազմավարության լեյտմոտիվը գիտությունն ու նորամուծական տնտեսությունն են: Հենց դրանք են պետական արդյունավետ մեքենայի հետ միասին կազմում այն կախարդական փայտիկը, որի միջոցով փոքրամասշտաբ երկրներն ու ոչ մեծաթիվ ազգերը կարողանում են միջազգային համակարգում օբյեկտից վերածվել սուբյեկտի: Օրինակները հանրահայտ են՝ Ճապոնիա, Կանադա, Իսրայել, Կորեա, Սինգապուր, Իռլանդիա, Ֆինլանդիա և այլն: Նույնիսկ բնական պաշարներով հարուստ երկրների հաջողված կամ ձայնողված լինելն ի վերջո պայմանավորված է այս գործոններով: Հայաստանի ներկա իրավիճակի բավական հաջողված հետազոտություն կատարվել է 2009 թ. «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի կողմից: Բերենք հիմնական ցուցիչները. «Մրցունակության համաշխարհային զեկույցում» Հայաստանը հետազոտված 133 երկրների թվում նորարարության մակարդակով 108-րդ, իսկ տեխնոլոգիական պատրաստվածության ցուցանիշով 105-րդ տեղում է: Հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) վրա կատարվող պետական ու մասնավոր հատվածների ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 0,2 %-ը, ինչը ծայրահեղորեն հետ է մնում նույնիսկ միջին ցուցանիշներից<sup>25</sup>: Եթե հաշվի առնվի նաև Հայաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի շատ ցածր մակարդակը, ապա վիճակն առավել խղճուկ է: Ընդ որում, ֆինանսավորման առյուծի բաժինն էլ արտաքին դրամաշնորհներինն է: Այսինքն՝ նույնիսկ հեռավոր արտասահմաններից Հայաստանում գոնե ինչ-որ մշակումներ են գտնում, կարևորում ու դրանց համար փող են տրամադրում, իսկ մեր պետական մեքենան ձեռքները լվացել ու մի կողմ է քաշվել:

Գիտելիքի և մտքի «հսկաների» ձեռքերում գտնվող մեր «խոշոր» բիզնեսն էլ դեռևս ազգականի կողմից կառավարելու «գիտելիքից» այն կողմ չի անցել, էլ ուր մնաց նորամուծությունների հնարավորություններն ու նշանակությունը գնահատելը: Խոշոր բիզնեսի կառավարման համակարգի գլխավոր մտահոգությունը սեփականատերերի համար դեռևս սահմանափակվում է գողությունները կանխարգելելու հարցի լուծմամբ: Լիովին պատասխանատու կերպով պնդում ենք, որ կորպորատիվ կառավարման համակարգերն անհասկանալի մութ անտառ են հայ նախարարների ճնշող մեծամասնության համար, ուրեմն՝ գործարարներից ի՞նչ ենք ակնկալում:

25 Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009. Նորարարության էկոհամակարգի սերմանումը, էջ 54, 55:



Անիրատեսական է հուսալ, թե այս գործում, զոնե պետական մասնակցությամբ ընկերություններում դրական փոքր տեղաշարժ կարող է առաջացնել ՀՀ կառավարության կողմից 2010 թ. դեկտեմբերի 30-ին հավանության արժանացած «Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը»: «Խոշոր բիզնես» կոչվածը մեզանում գրեթե մտահոգված չէ նորամուծությունների մշակման և դրանց արդյունքներով իր արտադրանքի մրցունակության բարձրացման հարցով, քանի որ սպառումը գլխավորապես ներքին շուկայում է, որտեղ ինքը մրցակիցներ չունի: Նույն այդ գործոնի հետևանքով նման բիզնեսը խթաններ չունի աշխարհում առկա բարձր տեխնոլոգիաների ներմուծման, արտադրական մշակույթի զարգացման կամ տարրական էներգախնայողության և ծախսախնայողության միջոցառումներ ֆինանսավորելու համար: Բավական է միայն ուշել, որ **բարձր տեխնոլոգիաներով պատրաստված արտադրանքի ծավալը Հայաստանի առանց այն էլ փոքրածավալ արտահանման մեջ կազմում է ընդամենը 1%**<sup>26</sup>: Մինչդեռ, Հայաստանի գիտահետազոտական հիմնարկների աշխատակիցների ներուժը բավական բարձր է գնահատված: Մեզ բախտ է վիճակվել վերջին շրջանում կոնկրետ ձևով ծանոթանալ գիտական և կիրառական բնույթի մեծաթիվ մշակումների հետ: Կարող եմ վստահաբար փաստել, որ **դեռևս ունենք ինչպես նախորդ, այնպես էլ վերջին շրջանում կատարված մշակումների զգալի պաշար**: Գուցե զարմանալի է, բայց առանձին մշակումներ նորամուծություններ են պարունակում նաև մասնակիցների ստացման ու կիրառման և ժամանակակից տեխնիկական առաջընթացի մյուս ոլորտներում: Դրանցից շատերը գրեթե ավարտուն ու կիրառական արժեքի վերածելու համար կարիք ունեն տեխնիկական, կազմակերպական, մարքեթինգային և ֆինանսական որոշակի աջակցության, որպեսզի մուտք գործեն բիզնեսի ոլորտ և իրացնեն շուկաներ: Պետությունը չունի այդպիսի մշակումների զարգացման և իրացման քաղաքականություն, մեխանիզմներ կամ կառույցներ: «Հայաստանի ազգային մրցունակության զեկույցում» փորձագետները զարգացման ամենաէական խոչընդոտ են գնահատել մասնավոր հատվածի, պետության և հետազոտական հիմնարկների միջև համագործակցության կայուն կապերի ու արդյունավետ մեխանիզմների բացակայությունը, որի ստեղծումն, անշուշտ, պետական մեքենայի պարտականությունն է: Ջեկույցի առաջաբանում, իհարկե, մեր պաշտոնյաները չեն զլացել կարևորել կատարված ուսումնասիրությունը և ի ցույց դնել իրենց «լուրջ» կեցվածքը: Պարզապես դրանից հետո մոռացության են մատնել այդ փաստաթղթում արված առաջարկները հետագա գործնական քննարկման ենթարկելու և գործողությունների ծրագիր ստեղծելու ու իրականացնելու իրենց պարտականությունը: Իրականության մեջ նորամուծական տնտեսություն ստեղծելու խնդիրը Հայաստանի պետական մեքենայի համար դարձել է այն լակմուսի թուղթը, որը լիարժեքորեն ցույց է տալիս այդ մեքենայի որակական անհամապատասխանությունը երկրի առջև կանգնած մարտահրավերներին: Եթե երկրի համար ոչ պակաս կարևոր այլ հարցերի լուծման գործում լուրջ խոչընդոտներ են եղել՝ պայմանավորված ինչ-ինչ ներքաղաքական շահերով, ապա այս գործում կարծես թե այդպիսիք չպետք է լինեին: Այստեղ վճռորոշը կառավարությունների մասնագիտական անկարողությունն ու շահագրգռության պակասն է: **Մա ՀՀ կառավարության**

26 Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009. Նորարարության էկոհամակարգի սերմանունը, էջ 62:

**Կողմից նման կարևոր հարցով զբաղվելու խմիտացիա անելու և այն կատարելապես ձախողելու ցայտուն և բնորոշ օրինակ է:**

Այսպես, հայտնի է, որ Հայաստանը ֆիզիկայի, քիմիայի, մեքենաշինության, էլեկտրոնիկայի, ավիատիեզերքի և այլ ոլորտներում Խորհրդային Միության հետազոտությունների ու մշակումների (ՀուՄ) գլխավոր կենտրոններից էր: Այս ներուժը անկախացման առաջին իսկ տարիներից ճիշտ գնահատելու կարողունակություն ունենալու և գրագետ պետական քաղաքականություն ու արտաքին տնտեսական գործունեություն վարելու դեպքում կարող էր ապահովել մեր տնտեսության վերելքը և լիովին հակակշռել Ադրբեջանի ածխաջրածնային պաշարներին: Սակայն 1991 թ. առկա 25,3 հազ. գիտահետազոտական աշխատողների փոխարեն այսօր մնացել է, այն էլ մեծ պայմանականություններով, 6,9 հազ. մարդ<sup>27</sup>: Միայն 2005-ից կառավարության մտքով անցավ նորամուծական տնտեսություն ստեղծելու կարևորությունը գոնե տեսական մակարդակում ըմբռնելու և ընդունելու հարցը:

*Կառավարության 2005 թ. հունվարի 20-ի N 2 արձանագրային որոշմամբ հավանություն էր փոխվել ՀՀ-ում ինովացիոն գործունեության հայեցակարգին: Իր խորության ու կոնկրետության առումով այն որպես հայեցակարգ շարժումն է նոր խոսել սովորող մանկան թոթովանքի: Տպագիր 6 էջից բաղկացած այդ փաստաթղթի 4 էջը խոսում է այն մասին, թե ընդհանրապես ինչ լավ բան է ինովացիոն գործունեությունը, իսկ մնացած 2 էջում էլ նշվում է ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին օրենք ընդունելու անհրաժեշտության և այդ օրենքի կառուցվածքի մասին: 2005 թ. սեպտեմբերի 28-ին ընդունվել է կառավարության N 1729-Ն որոշումը, որով հաստատվել է ՀՀ-ում ինովացիոն համակարգի 2005-2010 թթ. ծրագիրը: Թվում է, թե լավ է, անցել ենք կոնկրետ գործողությունների: Բայց «Ծրագիր» անվանված այս 10 էջից բաղկացած փաստաթուղթն ավելի շուր անխորհրդ հայեցակարգի հավելված կարելի է համարել: Այն պարզապես խնդիրների լուծման անհրաժեշտության արձանագրում է կամ մտրեցումների ընդհանրական և քիչ կոնկրետություն պարունակող շարադրանք: Իսկ առանձին կոնկրետությունների մասով կամ ոչինչ չի իրագործվել, կամ կատարումը ոչինչ չի փոխվել:*

**Օրինակ՝ վեներաբալ հիմնադրամի գործունեության իրավական հիմքեր այդպես էլ չեն ստեղծվել, տեխնոլոգիաների առևտրայնացմանն աջակցող կենտրոն չի հիմնվել, ինովացիոն մենեջմենթի կադրերի պատրաստման համալիր ծրագիր չի մշակվել, ինովացիոն ենթակառուցվածքների միասնական տեղեկատվական ցանց չի ստեղծվել, ՀՀ-ում առկա գիտատեխնիկական և ինովացիոն ներուժի, առկա տեխնոլոգիաների գույքագրում կատարելու և դրա արդյունքների մասին որևէ փաստաթուղթ հայտնի չէ և այլն:**

«Ծրագրի» համաձայն՝ 2006 թ. մայիսի 23-ին ընդունվել է օրենք ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին: Ըստ էության, այն նույնպես կարևոր լուծումներ և որոշակիություններ չի պարունակում: Միակ կարևոր որոշակիությունն առկա է՝ 8-րդ հոդվածի 2-րդ կետում՝ ինովացիոն գործունեության պետական աջակցությունն իրականացվում է տարեկան ծրագրով և ծրագրի ֆինանսավորումն արտացոլվում է պետբյուջեում առանձին տողով: Սակայն մինչև այսօր կառավարության կողմից հաստատված այդպիսի տարեկան ծրագրեր չեն ստեղծվել: Օգտակար ոչինչ չի տվել նաև 2006 թ. հոկտեմբերի 19-ի

27 Տե՛ս Հայաստանի ազգային մրցունակության զեկույց, 2009. Նորարարության էկոհամակարգի սերմանումը, էջ 55:

N 1466-Ն որոշմամբ ինովացիոն ոլորտի զարգացման հետևյալ գերակա ուղղությունների սահմանումը.

1. ինովացիոն ենթակառուցվածքների ստեղծում ու զարգացում,
2. էներգիայի այլընտրանքային աղբյուրներ,
3. բարձր տեխնոլոգիական մշակումներ,
4. էկոլոգիապես նախընտրելի տեխնոլոգիաների ներդրում ու զարգացում:

Եթե այս գերակայությունների սահմանումը լինել կոնկրետ ժամանակահատվածի համար ընտրված մոտեցում, ինչ-որ առումով գուցե իմաստավորվել: Թեև 3-րդ կետի ձևակերպումն արդեն ամեն բան դարձնում է անորոշ: Իրականում այս սահմանումը հիմք չի դարձել ո՛չ տվյալ ուղղություններին պետական աջակցության և ո՛չ էլ կոնկրետ ծրագրերի ու մեխանիզմների ստեղծման համար: Փաստենք, ինովացիաների ոլորտում պետության նախաձեռնությամբ իրականացված միակ գործնական քայլը «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի ստեղծումն է, որի գործունեության դաշտը գերազանցապես տեղեկատվական տեխնոլոգիաներն են: Այսպիսի բարձրագույն հայտարարություններով ու նմանակումներով տարիներ ենք գլորել: Այժմ էլ կարծես թե պտտվում ենք երկրորդ շրջանում:

2011 թ. փետրվարի 17-ի կառավարության նիստի N 6 արձանագրային որոշմամբ **նախկինում ընդունված որոշումները թողնվել են մի կողմ և ընդունվել է «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ»:** Մա ինքնին փաստում է նախկինում ընդունված որոշումների վերաբերյալ մեր նախորդ որակումների հիմնավորվածությունը: Այս փաստաթուղթը իր շարադրանքի որակով, մոտեցումների համալիրությամբ, ինովացիոն նախագծերի թվաքանակով (13), իհարկե, էապես տարբերվում է նախորդներից: Նրանում առաջադրված ինովացիոն նախագծերի նպատակահարմարության և իրատեսականության հարցը ներկա հրապարակման խնդիրը չէ և այդ մասով գնահատականներ տալու հիմքեր դեռևս չունենք: Սակայն պետք է արձանագրենք, որ կիրառական ուղղվածությամբ արդեն զգալի փուլեր անցած բազմաթիվ հեռանկարային մշակումների արդյունքներ (քիմիական, կենսաբանական, դեղագործական, նանոմասնիկների օգտագործման և այլն) կարծես թե դուրս են մնացել ուշադրությունից:

**Փաստորեն սկսում ենք նորից**, բայց տնտեսությունը ինովացիոն հենքի վրա փոխադրելու կոնկրետ ծրագիր կամ ռազմավարություն դեռևս չենք ընդունում, ինչն ակնկալելու հիմքերն ունի մեր հասարակությունը՝ հատկապես հաշվի առնելով անցած տևական ժամանակահատվածը և ուսումնասիրությունների վրա նախկինում կատարված ծախսերը: Ուրեմն՝ իրականում ընդունվել է **ամեն ինչ գրոյից սկսելու** ռազմավարության հայեցակարգ: Ըստ այդ փաստաթղթի՝ ազգային ինովացիոն համակարգի ձևավորման ժամկետները տեղափոխվում են մինչև 2020 թվականը: Իսկ տնտեսությունը ինովացիոն հենքի վրա փոխադրելու բուն գործընթացը տեղի կունենա համակարգի ձևավորումից, այսինքն՝ 2020-ից հետո: Այս փաստաթղթին դեռևս պետք է հետևի **սկսելու ռազմավարության** մշակումը, հետո՝ ռազմավարության իրականացումն ապահովող ծրագրի ստեղծումը: Մինչդեռ, առջևում նոր ընտրություններ են, իսկ նախորդ շարադրանքում ցույց ենք տվել մեր պետական մեքենայի ժառանգականության անբարեհուսությունը: Ամենակարևորն այն է, որ այսօր բազմաթիվ նախագծեր և ՀուՄ

արդյունքներ կարիք ունեն հետագա զարգացման կամ առևտրայնացման: Ստացվում է, որ դրանք բոլորը պետք է քննեն առնվազն մինչև 2017 թվականը, իսկ հաշվի առնելով նախորդ փորձերը՝ շատ ավելի երկար: Այսպիսով՝ **սա հարցի լուծում չէ, այլ սպանում:** Այս ամենին կարելի կլինի արդյունավետություն հաղորդել, եթե նման հայեցակարգն իր հունով իրագործելուն զուգընթաց, հենց այս տարվանից ձեռնարկվի ինովացիոն նախագծերի զարգացմամբ և առևտրայնացմամբ զբաղվող վեճաբանության հիմնադրամի կամ ֆինանսավորման այլ սխեմայի ձևով գործող կառույցի ստեղծումը: Այդ նկատառումով անդրադառնանք ոլորտի՝ ինստիտուցիոնալ առումով ճիշտ կազմակերպման բազմաթիվ կարևոր խնդիրներից երկուսին՝ գիտության պետական կառավարման մարմնին և գիտական արդյունքների ստեղծումն ու կիրառումը կազմակերպող կառույցին:

ա) Գիտության պետական կոմիտե

Այս մարմնի ստեղծումը ողջունելի քայլ է, բայց պետության և տնտեսության համար նրա դերակատարումն ու կարողունակությունն այն աստիճան կարևոր է, որ ոչ մի տրամաբանության մեջ չի տեղավորվում այն ԿԳՆ կազմում «տեղավորելը»: **Նախ**, այդ նախարարությունն արդեն տարիներով կրթության ոլորտի վերակառուցման այնպիսի բարդագույն գործի մեջ է գլուխը թաթախել, որ պետք է աղոթենք Աստծուն, որպեսզի այն բարեհաջող հանգրվանի հասցնի: **Երկրորդ**, գիտությունն ու նորամուծությունը պետք է կրթության ոլորտի առջև խնդիրներ և պատվերներ առաջադրողի գործառույթ իրականացնեն, ուստի հակադարձ կցորդումը խելամիտ չէ: Ասվածի կոնկրետ փաստարկումը կարելի է տեսնել ԿԳՆ կայք-էջում՝ ծանոթանալով «Գիտության ոլորտի զարգացման ռազմավարություն» անվանմամբ փաստաթղթի նախագծին<sup>28</sup>: Քանզի, ինչպես մեծ մասամբ պատահում է մեր նախարարությունների հետ, նրանք չեն տիրապետում «քաղաքականություն», «ռազմավարություն», «հայեցակարգ», «ծրագիր» հասկացությունների բովանդակությանը: Այս մեկը նույնպես որևէ կապ չունի «ռազմավարություն» հասկացության հետ: Այն ավելի շատ հայեցակարգ է հիշեցնում, թեև, միևնույն է, ներկայացված նախագիծն այդ վիճակում պարզապես կարգախոսների հավաքածու է: Փոխեք «Հայաստան» բառը այլ երկրի անվանումով և լիովին կհամապատասխանի նաև ուրիշներին, այսինքն՝ հեռու է որոշակիությունից և Հայաստանի կոնկրետ խնդիրներից: Եվ եթե նայենք նրա իրականացման միջոցառումների բովանդակությանը, ապա պարզ կլինի, որ մինչև 2020 թ. գործնականում կունենանք հայտնի «**Ուզում էինք, որ լավ լինի, եղավ ինչպես միշտ**» ասույթի հերթական դրսևորումը: Փաստաթուղթը բոլորովին հաշվի չի առել «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնի՝ վերևում հիշատակված հետազոտության արդյունքները: Ամենակարևորը՝ նախատեսված չեն ինստիտուցիոնալ առումով ամբողջական համակարգի նախանշումն ու ոլորտի գործառնության մեխանիզմները:

Մեր կարծիքով, պետք է ստեղծել **Գիտության և նորամուծությունների զարգացման նախարարություն (ԳՆՁՆ)** որևէ կերպ տուրք չտալով նախարարությունների թիվն ավելացնելու արհեստական մոտեցմանը: Կառավարությ-

1011 հուլիս-սեպտեմբեր, 2011 Գ. (Թ) Գրպի, թիվ 3 (35)

վե՛ր համահայկական հանդես

28 St u <http://www.edu.am/index.php?id=-3730&topMenu=14&menu1=-1&menu2=14&arch=0>

ան կառուցվածքը նույնպես դիմամիկ համակարգ է, որը կարող է և՛ ընդլայնվել, և՛ փոքրանալ: Մյուս կողմից, Էկոնոմիկայի նախարարությանը պետք է վերապահել ինովացիայի ազգային համակարգի գործունեության մեխանիզմների մշակման իրավասությունը: ԳՆՁՆ-ը պետք է զբաղվի այդ մեխանիզմների պայմաններում պետական ծրագրերի ընդունման ու իրագործման հարցերով և ոլորտի համար արտաքին ու ներքին բարենպաստ պայմանների ստեղծմամբ: Այն միաժամանակ լինելով գործադիր իշխանության մաս, չպետք է անմիջականորեն թաթախվի քիզնես-գործունեության կամ ֆինանսների բաշխման մեջ, ինչի որոշակի տարրեր պարունակվում են պետական ֆինանսավորմամբ թեմաները որոշելիս: Գլխառության պետական կոմիտեն այդ գործում որոշակի առաջընթաց քայլեր կատարել է, սակայն դրանք ինստիտուցիոնալ առումով էապես շտկման կարիք ունեն:

## բ) Իրագործող մարմին

Վերևում նշվեց հենց 2011 թվականից ինովացիոն նախագծերի զարգացմամբ և առևտրայնացմամբ զբաղվող վենչուրային հիմնադրամի կամ ֆինանսավորման այլ սխեմայի ձևով գործող կառույցի ստեղծման անհրաժեշտությունը: Սա պետք է անել արդեն կատարված ՀուՄ աշխատանքներն ու կոնկրետ կիրառական նախագծերի ընթացքը չընդհատելու համար: Գործակալության կամ ծառայության տեսքով այդ կառույցի ստեղծումն անհրաժեշտ է իրականացնել պետության նախաձեռնությամբ ու մասնակցությամբ: Նպատակահարմար է, որ կառույցը զբաղվի նաև ԳՆՁՆ-ի կողմից ընտրած ՀուՄ թեմաների ֆինանսավորման հետ կապված՝ առևտրային հարաբերություններով, պետության խնդիրներով թելադրված նորարարական ծրագրերի ի հայտ բերմամբ ու տարբեր աղբյուրներից դրանց համաֆինանսավորման կազմակերպմամբ: Դա պետք է կրի կվազիբյուջետային - կվազիքիզնեսային բնույթ: Այն կարող է առևտրային՝ հորիզոնական-պայմանագրային փոխհարաբերությունների մեջ մտնել և՛ պետական մարմնի, և՛ մասնավոր հատվածի հետ: Ընդ որում, ծախսերի խնայողության և կրկնություններից խուսափելու նպատակով կարելի է դիտարկել նաև գործող որոշ հիմնարկների ռեսուրսները օգտագործելու տարբերակը՝ ինստիտուցիոնալ առումով վերակառուցելով դրանք: Այս առումով շատ հարմար է **Զարգացման հայկական գործակալությունը** վերակազմավորել **Զարգացման և ինովացիաների հայկական գործակալության**: Հնարավոր են ինստիտուցիոնալ վերափոխումների բազմաթիվ այլ տարբերակներ: Ընդ որում, գործնական հաջողության համար, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, այստեղ նույնպես անհրաժեշտ են ոչ ստանդարտ լուծումներ: Ինչպես պետական կառավարման համակարգի վերափոխումների համար առաջարկվող **Ծրագրերի իրականացման գրասենյակի** պարագայում էր, նպատակահարմար է նույնպիսի մոտեցումներ կիրառել նրա կառավարման խորհրդի կազմավորման համար և աշխատանքների համակարգումն իրականացնել հատուկ այս նպատակի համար կոչված ՀՀ նախագահի խորհրդակցի կողմից: Ու թեև Հայաստանի խիստ անկատար պետական մեքենայի և տնտեսության նորացման համար պահանջվում են բազում այլ քայլեր ու լուծումներ, առայժմ սահմանափակվենք այսքանով:

## Եզրակացություններ

Անցած 20 տարիների ընթացքում պետականաշինության և երկրի զարգացման գործում իրականացվածը չիրականացվածին զիջում է **մի քանի անգամ**: Լուծումներ շատ կան, բայց առայժմ դրանք գտնող և նախաձեռնող-լուծողները չկան: **Քաղաքական կամքի առկայության և բարձր պրոֆեսիոնալ պետական ապարատի աշխատանքի դեպքում երկու տասնամյակը լիովին բավարար ժամանակահատված էր, որպեսզի կառուցվեին նոր որակի՝ ժամանակակից, խելամուտք են նախագծված և մոբիլ պետական համակարգ, նորացված և եվրոպական միջին մակարդակի կենսապայմաններով երկիր ու հասարակություն:**

Չիրականացվածի հսկայական բեռը և զարգացման ցածր մակարդակը Հայաստանի սահմանափակ ռեսուրսներով, Արցախի հարցով, անբարենպաստ աշխարհաքաղաքական դիրքով, պետության «երիտասարդ» տարիքով, ասիացուն բնորոշ օրինազանցի հորինված կերպարով կամ պետականությունից դարերով զրկվածության արդյունքը հանդիսացող հոգեկերտվածքով բացատրելը մասամբ անհիմն է, մասամբ էլ՝ խիստ միակողմանի: Վճռորոշը առկա պետական մեքենայի ձևախեղված կառույցն է (ինստիտուտները, դրանց իրավասություններն ու փոխհարաբերությունները, կադրային կազմը) և դրա ցածր արդյունավետությունը: Հարուստ բնական պաշարները, աշխարհագրական դիրքը կամ տարածքի ու բնակչության մեծությունը կարևոր գործոններ լինելով, առաջնային նախադրյալ չեն երկրի տնտեսական զարգացման և կյանքի որակի համար: **Առաջնայինը պետական լավ կառավարումն է, որը ենթադրում է և՛ քաղաքական, և՛ ձեռնարկատիրական ազատությունների, մարդասիրության, արդարության, օրինապահության, ազգային միավորիչ նպատակների, գաղափարների ու ծրագրերի առկայություն և դրանց շուրջ հանրության ու պրոֆեսիոնալների թիմի համախմբում:**

Ճիշտ չէ կարծել, թե Հայաստան երկիրը, նրա ժողովուրդը, առավել ևս՝ հայ ազգն ամբողջությամբ, դատապարտված են գոյատևելու այսպիսի արատներ ունեցող թույլ պետականության մեջ, հզորներին կուլ գնացողի և համաշխարհային զարգացումներից անհույս կերպով հետ մնացողի կարգավիճակում: Քաղաքական կամքի առկայության դեպքում միանգամայն իրատեսական է **3-5 տարում** ստեղծել ինստիտուցիոնալ առումով ճիշտ կառուցված և արդյունավետ գործող պետական մեքենա և ընդհանուր առմամբ՝ **5-7 տարում** հասնել մերժբայության երկրների, Չեխիայի կամ Սլովակիայի տնտեսական ու քաղաքական զարգացածության մակարդակներին: **Հայոց պետականության ապագային սպառնացող մարտահրավերներին լուծում պետք է գտնել ոչ թե ապագայում, այլ այսօր: Մեր զարգացման մայրուղին պետք է լինի բարոյականությամբ շաղախված, մեր ազգային մշակույթին ու հոգեկերտվածքին համապատասխան պետության նորացումը, ինովացիաները տնտեսության ու պետական համակարգի զարգացման հենք ու առաջատար ուժ դարձնելը և ամբողջ տնտեսության ու հասարակական կյանքի վերակառուցումն ա՛յդ նպատակամղումով:**

Կառավարության կողմից 2008 թ. ընդունված «Կայուն զարգացման ծրագիրը» իրատեսական ուղեգիծ է առաջադրում ինստիտուցիոնալ արդիա-

կանացման և պետական մեքենայի որակի բարձրացման համար: Դրա իրագործումը, սակայն, անցած երկուսուկես տարում մնացել է խնդրահարույց: Ստանդարտ մոտեցումներն այստեղ արդյունավետ չեն կարող լինել: Խիստ կաղում է այդ ծրագրի հանրային իրազեկման ու հանրային աջակցության կազմակերպումը: Բացի այդ, նման ծրագիրը չպետք է թողնել միջազգային կառույցների կողմից ստեղծված ստանդարտ մոտեցումներով փաստաթղթի կարգավիճակում: Գուցե շատերի համար հռետորական հնչի, բայց այդ **ծրագիրը պետք է հարստացնել մեր ազգային մշակույթին ու հոգեկերտվածքին բնորոշ բարոյական սկզբունքների և պետության առավել հեռահար նպատակների գաղափարական հիմնավորմամբ:** Պետական մեքենան պետք է օժտել այլ երկրների փորձառությունները և մեր իրողությունները հաշվի առնող ինստիտուցիոնալ կարողություններով՝ ծրագիրը հաջողությամբ զարգացնելու և իրագործելու նպատակով: Ուստի **անհրաժեշտ է կիրառել յուրովի մոտեցումներ և կազմավորել հենց այդ խնդիրների համար պահանջվող համապատասխան պրոֆեսիոնալների հատուկ թիմ:**

«Գլխուտին» պայմանական անվանումը կրող և քննարկման փուլում գտնվող նոր նախաձեռնությունը միայն մասնակիորեն կարող է ծածկել Հայաստանի պետական կառավարման համակարգի վերափոխման հիմնախնդիրների տիրույթը: Տվյալ դեպքում «Կայուն զարգացման ծրագրի» բաղադրիչների մեջ երկրի ինստիտուցիոնալ արդիականացման և պետական կառավարման համակարգի որակի բարելավման հիմնախնդիրների լուծումը համակարգելու և ամբողջ ծրագրի մոնիթորինգն իրականացնելու գործն իր բնույթով ու կազմակերպման բարդությամբ բոլորովին չի տեղավորվում ստանդարտ պետական կառույցների ամենօրյա աշխատանքների բնույթի և կարողությունների շրջանակներում: Մասնավորապես, այստեղ **նպատակահարմար է դիտարկել հետևյալ լուծումները.**

- ՀՀ Նախագահի կամ կառավարության աշխատակազմերից որևէ մեկի համակարգում հիմնել առանձին՝ պետական կառավարման համակարգի վերափոխման Ծրագրի իրականացման գրասենյակ,

- ԾԻԳ-ի կառավարման խորհուրդը ստեղծել ՀՀ Նախագահի՝ հատուկ այդ նպատակով ներգրավված խորհրդականի գլխավորությամբ, կառավարության աշխատակազմի և համապատասխան պետական մարմինների պատասխանատուների մասնակցությամբ,

- Պետական մեքենայի կառարելագործան համար շատ կարևոր է կոալիցիոն կառավարման ներկա պորտֆելային մոդելը ծրագրային և պրոֆեսիոնալ հենքով՝ միասնական թիմի մոդելով փոխարինելը:

Պետական մեքենայի նորացման հետ միաժամանակ, զարգացման մեջ ճեղքում ապահովող մյուս ուղու՝ տնտեսությունը ինովացիոն հենքի վրա փոխադրելու պահանջի տեսակետից առկա կարողությունները խիստ անհամապատասխանության մեջ են ներկա մարտահրավերների հետ: Այդ կարևորագույն գործում տեղապտույտի արդեն յոթերորդ տարին է լրանում: 2011 թ. փետրվարին ընդունվել է նոր փաստաթուղթ, որը սահմանում է ազգային ինովացիոն համակարգի ստեղծման ռազմավարության միայն հայեցակարգային մոտեցումները: Այդ համակարգի ստեղծման ժամկետը մինչև 2020 թ. տեղափոխելը և բուն արդյունքները միայն դրանից հետո ակնկալելը իրական կյանքում հա-

վասարագոր է առկա մշակումների արդյունքների ոչնչացմանն ու գործընթացի անարդյունավետությանը: Բացի այդ, իրական տնտեսության մեջ փորձառութիւն ունեցող գործիչները պետք է տեղյակ լինեն, որ **գիտատեխնիկական նվաճումների ստեղծումը պետական ինստիտուտների ստանդարտ կառույցների ու ստանդարտ սխեմաների միջոցով տեղի չի ունենում: Այդ գործում անհրաժեշտ են ոչ ստանդարտ լուծումներ:** Ռազմավարության մշակմանն ու իրագործմանը զուգահեռ, հենց 2011 թվականից անհրաժեշտ է իրականացնել կոնկրետ գործնական քայլեր: Նախ՝ **ակնհայտ է Գիտության պետական կոմիտեն Գիտության և նորամուծությունների զարգացման նախարարության վերակազմելու, նրան առևտրային բնույթի գործառույթներից ազատելու, էկոնոմիկայի նախարարության հետ իրավասությունները սահմանազատելու անհրաժեշտությունը:**

Միաժամանակ, պետք է նախաձեռնել պետական մասնակցությամբ կիսաառևտրային կառույցի մոդելով (հնարավոր է՝ վեճչուրային հիմնադրամի կամ այլ սխեմայով) նորամուծությունների նախագծերի համաֆինանսավորումը կազմակերպող և առևտրայնացնող կառույցի կազմավորումը: **Նպատակահարմար է քննարկել ՉՀԳ-ն Չարգացման և ինովացիաների հայկական գործակալության վերակազմավորելու հարցը: Նույն նկատառումներով, որոնք ներկայացված են Պետական կառավարման համակարգի վերափոխման ԾԻԳ-ի դեպքում, անհրաժեշտ է կիրառել դրա կառավարման խորհուրդը ՀՀ Նախագահի խորհրդականներից մեկի կողմից գլխավորելու մոտեցումը:**

**Հ.Գ.** Ներկա հրապարակման նպատակը շոշափված հարցերի վերաբերյալ հանրության պատկերացումների ընդլայնումն է և շեշտադրումների հստակեցումը: **Քիչ է հավանականությունը,** որ Հայաստանի ներկա պետական մեքենան տեղից կշարժվի՝ որևէ բան նախաձեռնելու նպատակով: Սակայն **մեծ է հավանականությունը,** որ մեր հանրությունն ավելի հստակ պատկերացումներ ունենալով երկրի զարգացման և իր ընտանիքի բարգավաճման ճանապարհը փակող իրական խոչընդոտների մասին, ի վերջո կհամախմբվի և տեր կկանգնի երկրի ապագային, իր ընտանիքի բարօրությանն ու արժանապատվությանը:



## Summary

### **ARMENIA: FACING THE CHALLENGE OF MODERNIZATION**

#### Issues of the State Apparatus and Economic Reforms

Merujan V. Mikaelyan

To this day, there is a false perception among state and political circles in Armenia that the Third Republic of Armenia is still very young and inexperienced. Thereby, the serious shortcomings that exist in the sphere of state building and the economy are conditioned by that reality.

More importantly, inspiring this position further is that more time is required for our statehood to mature and be in a position to confront all the foreign and domestic challenges facing it and to resolve issues related to a sufficient standard of living, the respect for human rights, the protection of social justice, a civilized political culture, free competition and the issue of establishing a state apparatus based on knowledge. Such a fundamental mentality postulates that it could not have been possible in a 20 year time period to reach more qualitative accomplishments, in particular, taking into consideration the Karabakh Issue, the geopolitical position of the country, the limited natural resources and the centuries-long absence of statehood. We are convinced that this is not the position of responsible, capable and honest political leaders regarding the fate of the country, but rather the attempt at hiding their own mistakes and shortcomings. This is dangerous because it condemns the country to severely modest accomplishments, acquiescence and to the disillusionment and weakening of the entire nation. Certainly, a large part of these factors are a limiting influence on a country's development.

However, this publication highlights the examples of other countries where natural resources or geopolitical location are not decisive factors for development. Proper political structuring and the presence of an efficient state apparatus are decisive. An efficiently structured state apparatus is completely able to compensate the influence of limiting factors as stated above. And when there are rich natural resources and favorable conditions, an inefficient state apparatus cannot save people from poverty, inefficiency and autocracy. It is exactly in this issue that our leaders have failed. An efficient and quality state apparatus has not been formed in Armenia due to an absence of information and placing personal and group interests above pan-national interests. It is formed incorrectly in an institutional sense and as a result, the potential of its personnel is insufficient. As the example of other countries illustrate, there are clear arguments which attest to the fact that 20 years is entirely enough time to create a high quality state apparatus. The examples of those countries that had experienced war and transformations in their social systems, illustrate that working sensibly during that time period is entirely sufficient to create a mature state governing system and is even able to thoroughly cure corruption that is deeply entrenched in those societies, and formulate a new, just and an accomplished culture. As a result of an absence of professionalism and the existence of self-interest, during the past 20 years, political leaders and civil servants, in

conditions of a defective, unjust and incomplete state apparatus, have not properly utilized the capacity of the Diaspora, the unity of the pan-national potential, the great chances rendered by its geopolitical position and the high individual ability of our people. Simply put, our political leaders and the state apparatus until today have not had sufficient abilities to understand, evaluate and utilize this great potential.

Twenty years is an extremely long period of time to have undertaken great projects. And we are still in a tumultuous stage – the small and medium-sized businesses, who, subjected to the oppression of monopolies have been pushed out, the all-embracing corruption which has established an interest-pursuing society; has made big business the enemy of society; and transformed the state apparatus into an apparatus of injustice. In terms of democracy, free competition, and social justice and in terms of serving the demands of the empowerment of the nation and the state, Armenia’s state apparatus has completely failed.

Aside from different paths and tools to untie this complex knot, the complete renewal of the state apparatus and an innovative restructuring of the economy will have decisive importance. The present realities require that we approach these issues outside of standard approaches. A whole grouping of solutions is brought forth in this article, whose realization requires extraordinary measures for authorities; and in case of their inability, on behalf of civil society.